Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1-93
77

Первопечатно-Литографская
электрическая
Е. В. Терть-Адиропуло.
Грибоедова № 1

30 MAY 2011

ԿՕՏ-ՄՈՒՌԼԻԿԱ

891.71-93
4-77
Ա γ
№ 9022.

ՓՈՔՐԻԿ ՑՈԼԱԿՆ

ՈՒ

ԽԼԸՃԻԿ ՆԱՊԱՍՏԱԿԸ

ԶՐՈՅՑ

ՊԱՏԳԵԲԱԶԱՐՔ

Մ.Ն.Կ.Ա.Ն. ԳՐԱԴԱՐԱՆ
Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ, ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/XI—1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Փոխադրեց

ԼԵՎՈՆ ՄԵԼԻՔ-ԱԴԱՄԵԱՆՑ

1002/7092

ՄԵՆԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ТИФЛИСКАГО СОБРАНІЯ БИБЛІОТЕКА

ԹԻՖԼԻԶ, 1904
ԱՐԱԳԱՏԻՊ ՏՊ. ՄՆ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ
Պուշկինեան փողոց, № 12.

23 MAY 2013
3806

Дозволено цензурою. Тифлисъ, 17-го Іюня 1904 г.

ՓՈՔՐԻԿ ՑՈՂԱԿՆ

ՈՒ

ԽԼԸՇԻԿ ՆԱՊԱՍՏԱԿԸ

Ա

Սիրելի ընթերցող, իսկի տեսած կա՞ս, թէ ձմեռ ժամանակ Խլըշիկ նապաստակն ինչպէս է վազվզում դաշտում, ինչպէս է ցատկոտում, կամ ձնակոյտերի վրայից ոնց է նա ոստնում, միւս կողմն ընկնում։

Հէ՞. չես տեսել։ Ափսո՞ս։ Բայց թող դեռ ասեմ, թէ ինչ բան է ձմռան քամին։

Ձմռան քամին՝ շա՛տ, ա՛նչափ շատ անգութն է. նա այնպէս է ազդում մարդու

վրայ, որ մինչի ոսկորներն է թափանցում, ձեռն ու ոտը ընդարմացնում։ Այդ տնաքանդը, այսինքն ձմռան քամին, էլ ոչ քիթ է խնայում, ոչ շրթունք, ոչ թուշ է հարցնում, ոչ ականջ, այլ այդ բոլոր բաց տեղերն այնպէս է մրսացնում—կարմրացնում ու կապտացնում, մղկտացնում ու զաղզաղորիկ բերում, որ մարդու աչքերից արտասուք է թափվում։ Հէնց միայար—շարունակ՝ վը՜ղ-վը՜ղ... փչում է ու փչում, շրուշրուացնում, կամ ոռնում, բուք-ու-բորան անում, ձիւնը բարձրացնում՝ մարդու երեսովը տալիս և կամ հոսան անում՝ ճամբորդի աչք, ականջ ու բերանը ձնով լցնում, շատ անգամ էլ բոլորովին ձնաթաղ տալիս-խեղդում։ Երբեմն-էլ՝ ահագին թանձրութեամբ նստած ձիւնը ժողովելով ճանապարհների վրայ, այնպիսի կոյտեր է կազմում, որ վրաներից ոչ ոտքով կարելի է անցնել-գնալ և ոչ էլ ձիով տալ անց-կենալ։

Էլ ի՞նչ, էլ ինչ ասես, որ այդ կապելու գիժը չանի։ Էլ բան չի թողնում, ամեն բան տակնուվրայ է անում, իրար գլխով տալիս. իսկ ուզած ժամանակն էլ բոլորովին քարուքանդ անում, հիմնայատակ կործանում։

Բայց մէկէլ յանկարծ տաղ է անում—

սուս կենում, կամ կամաց-կամաց լռում—հանգստանում այնպէս, որպէս-թէ աշխարհ տակնուվրայ անողը ինքը չէր, այլ մի ուրիշը։

Եւ ուրախ ու գոհ իր արածների վրայ, ինքնաբաւական կերպով կարծես ժպտում է, ժպտում ու բոլորովին ձայնը կտրում—հանդարտվում։

Երբ խելառն այդպէս լռած է լինում, կամ աւելի ճիշտը՝ խոր քունը մտած—եղանակը խաղաղած, մանաւանդ եթէ ցերեկ է ու արևն էլ դիպած, Տէր Աստուած, ի՞նչպէս հրաշալի է դաշտն այդ միջոցին։

Մաքուր ու անապական ձիւնը արեգակի զուարթ ու պայծառ ճառագայթների տակ այնպէս է պսպղում, փայլում, շողշողում, փելքստին ու հուրհրատին տալիս, պէծին-պէծին անում, որ նայողին այնպէս է թվում, թէ ողջ դաշտը միապաղաղ արծաթով է ծածկուած, կամ անթիւ ու անհամար ադամանդներով զարդարուած։

Ահա այդպէս ժամանակ, երբ օրուայ փուշը կոտրվում է, այսինքն եղանակը միքիչ մեղմանում տաքանում է, Խլրշիկ նապաստակն ուրախացած դուրս է գալիս բնից կամ

թաքստից և իր խաղն սկսում, այն է՝ դէսուդէն վազում, վազվզում, ցատկում, ցատկոտում։

Երբ եղանակն այդպէս հրաշալի ու լաւ է լինում, մեր Խլըշիկի քէֆին քէֆը չի հասնում. նրան այնպէս է թվում, թէ ողջ աշխարհն իրանն է։

Խլըշիկ Նապաստակը։

Բայց Նապաստակի խաղը միայն վազելն ու վազվզելը, ցատկելն ու ցատկոտելը չի. ոչ, նա դրանցով չի բաւականանում, այլև ոստնում ու ոստոստում է, կամ ծլունգ-ծլունգ

լինում, մին աջ, մին ձախ տրճիկ տալիս, ապա կանգ առնում, բայց հետինհետ—անմիջապէս վրայ-ու-վրայ քանմի թռիչքներ գործում, կրկին կանգ առնում ու խլըշում, խլըշկոտում և մէկէլ յանկարծ՝ օձը կծածի նման վեր թռչում, խնդրուզի տալիս ու չափ ընկնում և բաւական տարածութիւն մի շնչում անցնում-գնում ու էլի գիրթ—մէկէնիմէկ կանգ առնում, շուրջն աչք ածում—ուշադրութեամբ դիտում...։

Խլըշիկը՝ գոհ ու բաւական ինքն իրանից, հազիւ մի բոպէ հանգստացած, հիմա էլ սիրտն ուզում է լոք տալ—ոստնուլ ձնակոյտերի վրայից։

Եւ նա եօլ է անում, այսինքն կանգնած տեղից ետ-ետ է գնում բաւական տեղ ու յանկարծ ուժգին թափով վրայ վազում՝ ահագին բարձրութեան վրայից թռչելու դիտաւորութեամբ, բայց մէկէլ՝ թլը՜մփ... ընկնում է ու ամբողջովին թաղվում ձնակոյտի մէջ։

Սակայն մեր ժիր Խլըշիկի համար այդ ոչինչ բան է և շատ սովորական պատահարներից։ Բացի դրանից նա բաւական հակացող էլ է. շատերի նման իր յոյսը ուրիշների վրայ չի դնում. ոչ, նա այդ վատ,

այդ տնաքանդ սովորութիւնը չունի։ Հէնց-որ իրան մի դժբաղդութիւն է պատահում, էլ երկար-բարակ չի մտածում, այլ իսկոյն, առանց զուր ժամանակ կորցնելու, աշխատում է որ իր գլխի ճարը ինքը տեսնի, որպէսզի ըոպէ առաջ վտանգից ազատուի։

Ահա հէնց հիմա էլ այդպէս արաւ։

Երբ անսպասելի կերպով թլրմփաց ձնակոյտի մէջ ու թաղուեց, նա ոչ յուսահատուեց, ոչ լաց եղաւ, ոչ օգնութիւն կանչեց և ոչ էլ յիմարի պէս անգործ սպասեց, որ մէկը գայ իրան ազատի։ Ո՛չ, Խլրշիկը խելօք էր, այդպէս չարաւ. այլ անմիջապէս ճիգն թափեց—աշխատեց, ձնակոյտից դուրս եկաւ և դուրս գալուն պէս իսկոյն դունչ-ումունչը—բերանը, քթածակերը ձնից մաքրեց՝ որ ազատ շունչ քաշի, լօշտակ-լօշտակ ականջները թափ տուաւ, մէջները մտած ձիւնը վեր ածեց, ապա ինքնիրան թափահարեց, ձնից բոլորովին մաքրուեց. վերջն էլ երբ բեղերը մի լաւ սղալելուց յետոյ խլրշկոտաց—շուրջը նայեց, նրան այնպէս թուաց, թէ ոչինչ չի պատահել իրան։

Ո՛րքան լաւ է, երբ մարդ ինքն է իր գլխի ճարը տեսնում ճիշտ ժամանակին։

Եւ մեր Խլրշիկը նորից սկսում է իր խաղը. էլի սկսում է վազել ու վազվզել, լոք տալ—ցատկել ձնակոյտերի վրայից։ Իսկ եթէ այդ իրան չի յաջողվում և վայր է ընկնում, իսկոյն հօպ է անում, ցուպ-ցուպ տեղից վեր թռչում-կանգնում ու խլրշկոտում և երբ տեսնում է, թէ վտանգ չկայ՝ իրան ոչինչ չի սպառնում, ուրախացած ծլունգ-ծլունգ է լինում, էլի տրտինգ-տրտինգ անում, էլի խնդրուզիներ ու տրճիկներ տալիս և մէկէլ յանկարծ դունչը վեր բռնում և պինչը քամի մտած հորթուկի պէս զզզկոթած չափ ընկնում—ինչպէս նետ սլանում-գնում առանց ետ նայելու. էլ չհարցնելով ոչ փոս, ոչ փէտ, ոչ քար, ոչ էլ ձնակոյտ-ու-ձնակոյտ, այլ ինչ առաջն է գալիս, իսկոյն ոստնում է—վրայից թռչում, տալիս-անցնում ու իր վազքը շարունակում։

Մի օր էլ՝ երբ Խլրշիկն այդպէս գժի նման վազելիս է լինում, շատ մօտիկից, մի մեծ ծառի ետևից յանկարծ սուլոց է լսվում.

«Հիւ-հիւ, հիւ-հիւ, հիւ-հիւ՜ւտ...»։

Այդ յանկարծակի ձայնից սարսափահարվում է Խլրշիկը և իսկոյն գիրթ—մէկէնիմէկ կանգ առնում, ականջները խլրշում և ուշադրութեամբ ականջ դնում։

«Հիւ-հիւ, հ՛ըհրհիւ, հիւ-հիւա, հիւ-հիւ՛ա...», նորից լսվում է սուլոցը բոլորովին մոտիկից։

Ցոլակը սուլում է։

«Վայ-վայ-վայ-վայ-վա՜յ... Ձիւնը գլխիս. երևի որսորդ է ու շներն էլ հետը», մտածում է Խլըշիկ նապաստակն ու իսկոյն ականջները յետ տանում, կպցնում վզին և գլխապատառ ծլկում—փախչում, որքան ոտերում ոյժ է ունենում. բայց ոչ թէ իսկապէս փախչում, այլ իսկ-և-իսկ նետի պէս սլանում—թռչում։

Խլըշիկը՝ այդպէս նետի արագութեամբ ղղզկոթած բաւական տեղ գնալուց յետոյ յանկարծ մի բան մտաբերելով, գիրթ կանգ է առնում ու ինքնիրան ասում.

«Ես էլ ինչ անխելքն եմ. դեռ մէկ տեսնեմ՝ ով է և յետոյ փախուստի մասին մտածեմ։ Կարելի է իսկի վտանգ չկայ, ուրեմն էլ ուր եմ գլուխը կորցրած մարդու պէս փախչում այսպէս»։

Եւ Խլըշիկն անմիջապէս կկըզում է—յետին ոտերի վրայ նստում, մշտաշարժ դնչիկը մեկնում—դէպի առաջ ձգում, մի-երկու շահու, այսինքն՝ ամբողջ հասակովը-մէկ ոտի թաթերի վրայ բարձրանում, դէսուդէն աչք ածում, նորից-ու-նորից խլըշում, խլըշկոտում և ուրախացած ինքնիրան յանդիմանում.

«Է՛, ես էլ... կատարեալ յիմարն եմ եղել...։ Այդ հօ մոտիկ գիւղացի փոքրիկ Ցոլակն է, իմ լաւ բարեկամը։ Երբ անցեալ տարի անպիտան շները բռնեցին խեղճ հայրիկիս ու պատառ-պատառ արին, այդ բանից այնպէս վախեցայ, որ մի շաբաթ հիւանդի պէս էի. ահիցս էլ չէի կարողանում մի տեղ գնալ, կամ պարտէզ, բանջարանոց մտնել՝ մի բան ուտելու։ Սաստիկ քաղցից հնգըլ-

հնգրլն էի ընկել—ուժասպառ եղել. մեծ դժուարութեամբ էի ոտերս շարժում։ Երբ Ցոլակն ինձ տեսաւ այդպիսի դրութեան մէջ, խղճաց վրաս. իսկոյն մօտ եկաւ, փայփայեց, մէջքս սղալեց—շոյեց ու գրկեց-տարաւ իրանց բանջարանոց, ուր ինձ գաղարի տերև ու կանանչ սիսեռ ուտացրեց։ Ապրի դրա արևը. եթէ դա չլինէր, հաստատ է որ խեղճ հայրիկիս նման ես էլ շների ճանգը կ'ընկնէի։ Ուրեմն քանի-որ սուլողը իմ լաւ բարեկամն է, էլ ինչո՞ւ եմ այսպէս գլխապատառ փախչում։ Ցոլակը բարի է, ինձ վնաս չի տալ. որովհետև միայն շար, վատ ու անպիտաններն են ուրիշներին վնաս տալիս, մարդկանց հանգիստը վրդովում։ Իսկ ես փորձով գիտեմ որ Ցոլակը լաւ տղայ է. նա մինչև անգամ կ'ուրախանայ էլ, եթէ նորից ինձ տեսնի»։

Խլրշիկն այդպէս ինքնիրան սիրտ տալով, ետ է դառնում և կուրպատ-կուրպատ—շրջանաձև ու կուզրկուզ — գաղտնագողի առաջ է գնում, Ցոլակից միքիչ հեռու կկրգում, ականջները խլրշրցնում և ուղիղ նրա աչքերին մտիկ տալիս։ Խլրշիկը մին ետ էր ծալում ականջները՝ փախչելու մտքով, մին խլրշում—դէպի առաջ երկարացնում՝ որ լաւ լսի, և հետն էլ մտածում.

«Հը՞, արդեօք ո՞նց անեմ. մնա՞մ թէ ծլկեմ»։

Այդպէս մտածում էր Խլրշիկն ու ահից զնգրրզնգրը դողում։

—Այդ դո՞ւ ես, Խլրշիկ. բարով ես ու դու։

Ցոլակի այդ ձայնից նապաստակը մի գազ ծլունգ է լինում—վեր թռչում. միայն իսկոյն սրտապնդելով թէև նստում է տեղը, բայց շարունակում է դողդողալ։

—Ձե՞ս ամանչում որ այդպէս դողում ես։ Ի՞նչ կայ վախենալու. ես հօ քեզ չե՞մ ուտելու։

«Այո՛, գիտեմ,—մտքումն ասում է նապաստակը.—գիտեմ որ ինձ չես ուտիլ... բայց դէ՞... ի՞նչ անեմ... ո՞նց անեմ որ չվախենամ... Ախր մի տեսակ ահալի է, է՞...»։

—Տօ, վախկոտ, ի՞նչ կայ, է՞, որ այդպէս ահուդողի մէջ ես ընկել։ Ամօթ է, ամօթ. սիրտդ պլինդ պահիր։ Մարդ պէտք է քաջ լինի և երբէ՛ք ոչ մի ժամանակ այդպէս չվախենայ։ Լսո՞ւմ ես՝ մարդ ոչ մի ժամանակ ու ոչ-ոքից չպէտք է այդպէս վախենայ։

—Հա՜, հեշտ է ասելը՝ չվախենալ ոչ մի ժամանակ ու ոչ-ոքից։ Սակայն ինչպէս կարելի է չվախենալ, քանի-որ դու երկու ոտն ունես, իսկ ես չորսը։

—Լաւ, ինչ անենք։

—Դէ՛, մենակ այդ չի՛, է՞։

—Հապա էլ ուրիշ ինչ։

—Այն՝ որ քո ականջները իսկի չեն էլ երևում, այնքան փոքր են, մինչդեռ իմոնքը՝ տես, ինչպէս մեծ-մեծ են ու երկար-երկա՜ր։ Մէկ մտիկ տուր, է՞,—ասում է նապաստակը և թափահարում լօշտակ-լօշտակ ականջները։

—Դրանով ինչ՝ ես ուզում ասել։

—Այն՝ որ հեշտութեամբ կը-բռնեն ականջներից ու ինձ կ'ուտեն։

—Ա՛խ, ինչ խելառն է եղել սա։ Տօ, խելքի աղքատ, քեզ ո՞վ կ'ուտի։

—Ո՞վ։

—Այո՛։

—Ամենից առաջ կծոտողները—ձեր գիւղի շները։

—Լաւ, յետո՞յ։

—Յետոյ գայլերը։

—Իսկ յետո՞յ։

—Իսկ յետոյ... խնամի աղուէսը։

—Էլ ուրիշ ո՞վքեր։

—Էլ ուրիշ... բրդոտ լուսանը, կզաքիսը, որ շատ է սիրում մեր միսը, կնգումը, ժանտաքիսը... վերջապէս ո՞ր մէկի անունը տամ, քանի-որ ողջ անտառը լիքն է մեր արիւնարբու թշնամիներով։ Դեռ մի կողմը մնայ արջը, որից Աստուած փրկի ու ազատի մեզ ամենքիս։ Դէ՛, այդքան շատ ու անպիտան թշնամիք ունենալուց յետոյ կարելի՞ է չվախենալ։

—Ի-հարկէ կարելի է, եթէ մարդ քաջ լինի և ոչ թէ թշնամու շատութիւնից դողայ վախկոտի նման։ Վտանգի ժամանակ փոխանակ քաջաբար կռուելով ձեզ պաշտպանելու, դուք իսկոյն կամ փախուստի մասին էք մտածում, կամ գլուխնիդ ծռում, ձեռքներդ ծալած մնում ու այդպիսով թշնամու բերանն ընկնում և թոյլ տալիս որ նա ձեզ ուտի կամ վնասի։

—Լաւ, ինչով պաշտպանուենք։ Չէ՞-որ պաշտպանուելու համար շատ բան է հարկաւոր, իսկ մենք ոչինչ չունենք։

—Զարաչար սխալվում ես, պարոն Խլրշիկ։

—Մի՞թէ ուղիղ չեմ ասում։

—Ի-հարկէ ոչ։ Մէկ ինձ ասա տեսնեմ. ատամներ ունե՞ս։

—Վա՛յ, ինչ է ասում. ի-հարկէ-որ ունեմ. ի՞նչպէս կարելի է ատամներ չունենալ։ Ահա՛,—և Խլրշիկը բարձրացնում է իր ճեղքուած շուրթն ու ցոյց տալիս դուրի նման սուր-սուր ատամները։

—Շատ լաւ. իսկ եղունգնե՞ր։

—Այդ էլ ունեմ։

—Հապա էլ ինչո՞ւ ես խելքիդ զօռ տալիս և ասում, թէ ո՛չ մի միջոց չունէք ձեզ պաշտպանելու։ Մի՞թէ քիչ բան է այդպէս ատամներ ու այդ տեսակ եղունգներ ունենալը։ Ինչո՞ւ հարկաւոր դէպքում դրանցով չէք դիմադրում ձեր թշնամուն։

—Լա՛ւ, սրանցով ի՞նչպէս կարելի է դիմադրել։

—Շատ բնական կերպով. ձեր թշնամին կծում, ձեզ ցաւ է պատճառում, դուք էլ նոյնն արէք. ատամնե՛րով կծոտեցէք, եղունգնե՛րով չանգռեցէք նրա երեսը, հանեցէ՛ք աչքերը, պրծա՛ւ-գնաց։ Բայց այդպէս պէտք է անել քաջի պէս, այսինքն անպատճառ յաղթելու յուսով և ո՛չ-թէ յուսահատ—անսիրտ կերպով։

Փոքրիկ Ցոլակի այդ ասածները շատ դիւր են գալիս Խլրշիկի սրտին. նա ժպտում է ու կնդով անում—գլխի շարժումով հաւանութիւն ցոյց տալիս և ապա ասում.

—Ա՛խ, յարգելի՛ բարեկամ, շա՛տ, ա՛նչափ շատ լաւ են ասածներդ. հիանալի կը-լինէր, եթէ այդպէս անէինք, սակայն...

—Էլ ի՞նչ սակայն, տո վա՛խկոտ։

—Բայց ախր մենք...

—Սպասի՛ր, քեզ մի բան ասեմ,—ընդհատում է նրան Ցոլակը։

—Ասա՛, տեսնեմ։

—Ի-հարկէ-որ պաշտպանուելու համար մենակ այս կամ այն միջոց ունենալը դեռ բաւական չէ, այլ անհրաժեշտ է հետն էլ խելք ու քաջութիւն ունենալ, միմեանց թև-ու-թիկունք լինել—իրար օգնել գիտենալ...։ Խելքի կողմից՝ էլի ոչինչ, բաւական խելօք էք, սակայն քաջութեան կողմից դուք շատ էք կաղում։ Ճի՞շտ եմ ասում թէ ոչ։

—Ա՛խ, ի՞նչ ասեմ, ա՛խպէր, սուտ չեմ կարող խօսել. ճշմարիտ ես ասում։ Փոքրութիւնից այսպէս ենք մեծանում. մեզ չեն սովորեցնում, թէ ի՞նչ պէտք է անել՝ ապահով կեանք ունենալու համար։ Ա՛խ, ի՞նչ-

1002/7033

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Պոլսոյ Հ. Գրադարան
1922
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

քան լաւ կը-լինէր, եթէ այդ ասածներդ հէնց փոքրութիւնից սովորեցնէին մեզ... բայց հիմա արդէն ուշ է։

—Ո՛չ, էլի ես սխալւում այդպէս մտածելով։ Լաւ-լաւ ու օգտակար բաները ամեն հասակում ես կարելի է և պէտք է սովորել։ Պ'ուզենս, քեզ սովորեցնեմ քաջ լինել։

«Թէկուզ սովորեցնես, թէկուզ ոչ,—մրթքումն ասում է Խլըշիկը.— մենակ ինձանով ինչ կը-դառնայ. պէտք է ամենքս էլ քաջ լինենք, իրար օգնել գիտենանք հարկաւոր դէպքում, որ լաւ լինի»։

—Ինչու չես պատասխանում...։ Ձես ուզում։

—Ինչու չէ. լաւ բանը ով չի ուզիլ։

—Դէ՛, եկ մօտեցիր ինձ։

Նապաստակը մի-երկու քայլ է անում ու տարակուսած կանգ առնում և մտածում.

«Հա՛, լաւ ես հրամայում. ասում ես մօտեցիր, բայց մէկէլ յանկարծ հինգ-ախպօր զօրութիւնը ցոյց կը-տաս՝ մի լաւ թաթալոշ—ապտակ կը-հասցնես երեսիս»։

—Մի՛ վախենար, մօտեցիր. ես քեզ մատով էլ չեմ դիպչիլ։

Խլըշիկը բոլորովին մօտենում է Ցոլակին։

—Ահա այս էլ եկայ,— ասում է ու շարունակ խլըշկոտում, դողդողում, ամբողջ մարմնով ցնցվում. մէկ խօսքով՝ ինչպէս ասում են, փախչելու համար երկու շահին ձեռին է լինում։

—Լսի՛ր,—ասում է Ցոլակը.—ես ծափ կը-տամ, իսկ դու պէտք է հանդարտ մնաս և տեղիցդ չշարժուես։ Լսո՞ւմ ես։

Նապաստակը կնդով է անում, այսինքն թէ լսում եմ։

Ցոլակը ձեռքերը հեռացրեց իրարից ու յանկարծ որ մի լաւ ծափ տուաւ... Վըյի՛յ, նանի-ջան, ինչ պատահեց Խլըշիկի՞ն։ Ծափի ձայնից նա այնպէս վախեցաւ, որ եօթը գազ ծլունգ ելաւ—վեր թռաւ ու յետ վայր ընկաւ, ապա տեղից ցատկելով գնաց հեռու կանգնեց ու աչքերը չռած—լայն բաց արած՝ մնաց Ցոլակի երեսին նայելիս։

Իսկ Ցոլակը կողքը բռնած ծիծաղում էր։

—Որ ասում եմ՝ վախկոտ ես. սուտ հօ չեմ ասում։ Դէ՛, էլ ինչպէս չասեմ որ վախկոտ ես։

Ցոլակի խօսքերը Խլըշիկի սրտին շատ դիպան և նա կամենալով քաջ երևալ, իսկոյն եկաւ, Ցոլակի մօտ կանգնեց ու սկսեց ետի

ոտերով քայլ-քայլ անելով ձիւնը շաղ տալ—
ցրուել դէսուդէն։

—Բյլ՜... վախկոտ, վախկոտ...

—Հա՛, լաւ. էլ ինչո՞ւ ես մարդու վիրա-
վորում. ես որ այսպէս...

Բայց Ցոլակը չսպասեց որ Խլըշիկը խօս-
քը վերջացնի, այլ յանկարծ կրկին որ ծափ
չտուաւ... պա՜յ-պա՛յ, պա՜յ-պա՛յ-պա՛յ-պա՛յ...
ձեզ մատաղ, հէնց գիտենաս մի զօրեղ քա-
մի Խըշիկին գետնից պոկեց ու վեր թըռ-
ցրեց։ Նա էլի եօթը գագ ծլունգ ելաւ ու
յետ վայր ընկաւ, ապա վեր ցատկելով միքա-
նի անգամ ինքն իր շուրջը պտրտեց-պտր-
տեց ու էլի վայր ընկաւ. բայց հետինհետ
վեր թռաւ-կանգնեց, մի-երկու անգամ փռըշ-
տաց, ինքնիրան թափահարեց ու սկսեց
այսպէս խօսել մտքի մէջ.

«Ա՛խ, ա՛խ, ա՛խ... գետը տանի իմ տի-
րոջը. ա՛յսպէս էլ վախենալ կը-լինի՞...։ Սիրտս
այնպէս է գնում-գալիս, տրըփտրըփում—
բաբախում, որ կարծես ուզում է տեղից
դուրս թռչի...»։

—Դէ՛, բան չկայ,—ասում է Ցոլակը.—այդ
առաջին երկու անգամինը ոչինչ, հաշիւ չէ.
ա՛յի երրորդ անգամ փորձենք։ Բայց տես,

զգոյշ. եթէ այս անգամ էլ չդիմանաս—չկա-
րողանաս սիրտդ ամուր պահել ու տեղդ
կանգնած մնալ, այնուհետև քո անունը ո՛չ-թէ
Խլըշիկ-նապաստակ կը-լինի, այլ յաւիտեանս
յաւիտենից դու կը-կոչուես վախկոտ-նապաս-
տակ։ Հասկացա՞ր։

Նապաստակը կնդով է անում և ինչքան
կարողանում է՝ սրտապնդում է իրան, մօ-
տենում Ցոլակին ու ասում.

—Դէ՛, ծա՛փ տուր, տեսնենք,—ասում է
ու գետնին կպչում որ էլի վեր չթռչի։

—Ո՛չ, այդպէս չի կարելի։ Վե՛ր կաց
կանգնիր յետին ոտերիդ վրայ... դունչդ բար-
ձրացրու։ Ուղի՛ղ, ուղի՛ղ... բոլորովին ուղիղ,
ինչպէս կարգն է...։ Ահա՛ այդպէս։

—Դէ՛, պրծի՛ր, ծա՛փ տուր,—ասում է
Խլըշիկը։

Ցոլակը ծափ է տալիս։

Խլըշիկը թէպէտ էլի է ծլունգ լինում,
բայց-և-այնպէս այս անգամ շուտ ինքնիրան
հաւաքելով, կանգնում է հանգիստ և ինքնա-
բաւականութեամբ հարցնում.

—Ո՞նց էր. լաւ էր, չէ՞։

—Այո՛, բայց ո՛չ այնքան, ինչպէս պէտքն
էր,—պատասխանում է Ցոլակն ու անսպա-

սելի կերպով նորից մի փառաւոր ծափ տալիս ուղիղ նապաստակի ականջի տակին:

Վա՜յ... ձեզ մատաղ... այդ ի՞նչ էր...

Այդ յանկարծակի ծափի ձայնից նապաստակը սասանուեց և այնպէս սաստիկ վեր թռաւ ու մէջքի վրայ վայր ընկաւ, որ գլխկոնը վեր ելաւ: Իսկ Ցոլակն էլի սկսեց փառփառ ծիծաղել:

—Ո՛չ,—ասում է Խլըշիկը, տեղից վեր ցատկելով.—ոչ, մի՛ ծիծաղիր: Այս մինը շատ յանկարծակի էր. բոլորովին միամիտ էի...: Ա՛յ, տեսնո՞ւմ ես. էլ չեմ դողում:

—Այո՛, ուղիղ է,—ասում է Ցոլակը.—դու հիմա բաւական քաջ ես: Դէ՛, հիմա թո՛ղ քեզ վրայ նստեմ:

—Ի՞նչ ես ասում, ի՞նչ ես ասում,—վախեցած բացականչում է Խլըշիկը:—Ի՞նչպէս կարելի է վրաս նստել. չէ՞-որ մէջքս կը-կոտրուի:

—Չի կոտրուիլ, միայն-թէ դու քաջ մնաս և ինչ-որ անելու լինենք, չվախենաս: Ուրեմն սրի փորձենք:

Խլըշիկը յանկարծ սրտապնդում է:

—Շա՛տ լաւ, փորձենք,—ասում է ու աչքերը փակում, գետնին կպչում:

Ցոլակը հեծնում է, բայց Խլըշիկը մնում է գետնին կպած:

—Վա՛յ, վեր տեղիցդ, վազի՛ր, է՞:

Խլըշիկը վեր է կենում ու չափ ընկնում:

Վազում է, վազում, վազում ու մէկէ՛լ չկարողանալով իրան պահել, ծռվում է և երկուսով միասին՝ թլը՜մփ... ընկում են մի մեծ ձնակոյտի մէջ:

Երբ ձնակոյտի միջից դուրս գալով՝ վրանգլուխնին մաքրում-պրծնում են, Խլըշիկը ինքնաբաւական կերպով դիմում է Ցոլակին.

—Հը՜... լաւ էր, այնպէս չէ՞:

—Շա՛տ լաւ էր. ասլրես, կեցցես: Դու հիմա բաւական քաջ ես:

—Հիմա ես քա՛ջ եմ, քա՛ջ,—ուրախ-ուրախ բացականչում է Խլըշիկը և սկսում այնպէս եռանդով քացիներ գցել, ծլունգ-ծլունգ լինել, տրճիկներ տալ ու տրտինգ-տրտինգ անել, որ քիչ էր մնում նորից գլորուէր:

—Ուղիղ է, հիմա վախկոտ չես,—ասում է Ցոլակը,—սակայն իսկական քաջ լինելուց էլ դեռ շատ հեռու ես: Բայց եթէ ուզում ես այդպէս քաջ լինել, պէտք է թողնես որ էլի հեծնեմ քեզ:

—Լաւ, համաձայն եմ,—ասում է Խլըշիկը.—սակայն ո՞ւր պէտք է տանեմ քեզ։

—Դու պէտք է անվախ քաջի պէս ահ ու երկիւղը սրտից դուրս հանած՝ ինձ տանես և չափ ընկած գիւղի միջով անցկացնես։

—Ըհը՛, ըհը՛... մէկ տեսէ՛ք թէ ինչ է մտածել...։ Դու էլ՝ իբր-թէ բա՜ն ասացիր։ Ես ի՞նչպէս կարող եմ գիւղի միջով անցկենալ, քանի-որ գիւղը լիքն է շներով։

—Ի՞նչ անենք։

—Ի՞նչպէս թէ՝ ի՞նչ անենք. չէ՞-որ մեծ պատառս ականջս կը-թողնեն—ինձ բզիկ-բզիկ կ'անեն։

—Չէ՛-չէ՛ մի՝ պոզեր...։ Շներն ի՞նչպէս կարող են քեզ մօտենալ, քանի-որ ես հետդ եմ լինելու։ Եւ վերջապէս ինչո՞ւ ես մեռնելուց այդպէս վախենում. մի անգամ ծնուել ես, մի անգամ էլ պէտք է մեռնես, էլի՛։ Մի՞թէ վախենալով կարող ես ապատ մնալ մեռնելուց։

—Ո՛չ, ի-հարկէ. ես էլ գիտեմ, որ ոչով երկու անգամ չի մեռնում. բայց-դէ՞...

—Էլ ի՞նչ «բայց-դէ». եթէ այդքանը խելքդ կտրում է, ուրեմն այն էլ պէտք է հասկանաս, թէ ինչ-որ անպատճառ լինելու է, կը-

լինի, ուրեմն վախենալը զուր է և աւելորդ. մանաւանդ-որ անխելքներն են միշտ ամենքանից վախենում։ Իսկ դու, փա՛ռք Աստուծոյ, անխելք չես։

—Լաւ,—ասում է Խլըշիկը,—այսուհետև էլ չեմ վախենալ։

—Եւ լաւ կ'անես. իսկ եթէ ուզում ես ապատ ու ապահով մնաս, պէտք է նաև քաջ լինես միշտ և հանապազ։

—Շատ լաւ։

—Դէ՛, ուրեմն ինձ տար և գիւղի միջով անցկացրու։ Միայն՝ ինչպէս ասացի, քաջ տղամարդու նման սրտալի, առանց ահ ու երկիւղի։

Խլըշիկը մօտ է գնում, մէջքը դէմ անում որ Յոլակը նստի ու ինքնիրան մտածում.

«Ի՞նչ լինելու է, թող լինի. կա՛մ կը-մեռնեմ, կա՛մ ողջ կը-մնամ։ Եթէ ո՛ղջ մնա՛մ, լա՛ւ. իսկ եթէ ո՛չ, գոնէ ինձանից յետոյ քաջի անուն կը-թողնեմ և ուրիշների համար բարի օրինակ կը-հանդիսանամ»։

Խլըշիկը սկզբում դանդաղ է առաջ գընում, բայց հետզհետէ վազքը սաստկացնելով՝ ամենայն արագութեամբ առաջ է ընթանում։

Հեռո՛ւ... ճանապա՛րհ...

Կարճ միջոցում հէնց-որ նրանք տեղ հասան, գիւղում ինչ-որ կծոտող—գամփռ-մամփռ, ճուճկի-մուճկի, գաղար-մաղար, քերծէ ու մերծէ և թէ որսի բարակ՝ մեծ ու փոքր շներ կային, բոլորն էլ դուրս թափուեցին քունջուպուճախներից ու՝

«Եաֆ... Հաւ-հաւ-հաւ... Հաֆ-հաֆ... Ափ-ափ... Եաֆ-եաֆ... Եաֆը՞-եաֆը՞... Հրաֆ-հրաֆ»... հաջոց-մաջոցներով նրանց ետևից ընկան։

Ցոլակն ու Խլբիկը անցնում են գիւղի միջով։

Խեղճ Խլբիկը ահից աչքերը կիսախուփ այնպէս էր ծլկում—չափ ընկած փախչում, ինչպէս-որ նետն է սլանում կամ ծիրը թռչում օդում։

Ցոլակը գուշակած լինելով շների յարձակումը, առաջուց իր պատրաստութիւնը տեսել էր. նա երկու զրպանն էլ լցրել էր քարերով։ Ուստի էլ միջոց չի տալիս շներին որ իրանց մօտենան. այլ տրաք՝ մէկի դնչին է քարով տալիս, միւսի ճակատի՝ էէ... մէջտեղին ծեփում, երրորդի՝ էէ... ականջակոթին հասցնում և կամ որի կողքին, որի կոկոզին աչկում—նշան դնում ու վրայ բերում...

Այդ անսպասելի յաջողակ հարուածներից շները՝

«Հրաաւ... Իաաւ... Վը-վաաւ... Վրվա-վրվա... Ըա... Ա-աա»... կալանչ-կալանչ գալով ու ծմրալով՝ էլ չեն համարձակվում առաջ գնալ, այլ մնում են տեղները կանգնած, լուսնահաջ տալիս, այսինքն հէնց այնպէս՝ սկսում են աննպատակ հաջալ նրանց ետևից։

Բայց նապաստակը ոչինչ չհասկանալով անցած-դարձածից, այդ կատարուածից, ջանը քոր ընկածի պէս այնպէս էր կծիկը դրել—գլխապատառ փախչում, որ կարծես գետնի վրայ չէր վազում, այլ օդումն էր թռչում։

—Աղջի, աղջի,—զարմացած ձայն են

տալիս գիւղի կանայք.—ա՛ղջի, դէնը մտիկ տուէք. մէկ տեսէք այն ո՞վ է...

—Աճի Թա՛քուշ-նանի, տնաշէնի կնիկ, մէկ դէնը մտիկ տուր, է՛. Թոռդ նապաստակին ձի է շինել, վրէն նստել ու չափ գցած գնում։

—Վա՛յ, դո՞ր դ որ...։ Վա՛յ, քո տունը շինուի, Ցո՛ղակ...։ Այս ի՞նչ հրաշք է... ո՞վ էր տեսել այսպէս բան...։ Փա՛ռք Քեզ, Ա՛ստուած, այս էլ տեսանք։

Իսկ մեր քաջ բարեկամները իրանց ճանապարհը շարունակելով՝ կրկին գնում են դաշտ։

Տեղ հասնելուն պէս հէնց-որ Ցողակն իջնում է, Խլըշիկն իսկոյն երկար-ու-մէկ ձգվում է ձնի վրայ։ Խեղճը հազիւ էր շունչ քաշում։ Բեռը մի կողմից, կծոտողների ահը միւս կողմից բոլորովին հալից գցել էին նրան։

—Հը՛, ի՞նչ է մեր տղայ. չլինի՞ թէ կամենում ես որ գնամ բժիշկ կանչեմ քեզ համար. թէ՞ ուզում ես հիւանդանոց մտնել։ Լա՛ւ կարիճ ես, էլ ասել չի ուզիլ։ Ի՞նչ էր արածդ. մի անգամ գիւղի միջովն անցնելը ի՞նչ մեծ բան էր որ եկել-ձգել ես ոտներդ։ Ի՞նչ քնքուշն ես եղել... Մի՛քիչ ձիւն քսիր

ճակատիդ, պրծա՛ւ-գնաց։ Այդպէս քնքշութիւնը վայել չէ տղամարդուն, ա՛մօթ է։

Սակայն Խլըշիկը մնաց նոյն դրութեան մէջ։

—Դէ՛, շո՛ւտ, վեր կաց, է՛. լաւ բան պէտք է ասեմ քեզ։

«Ո՛չ,—մտքումն ասում է Խլըշիկը.—ո՛չ. մեղրուկարագն ի՞նչ է, եթէ հիմա ինձ մեղրուկարագ էլ տաս, էլի չես կարող ինձ խաբել...։ Վա՛յ, ձեզ մատաղ... վա՛յ, նանի-ջա՛ն... այն ի՞նչ զարհուրելի բաներ էին և ի՞նչքան էլ շատ էին անիծածները...»։

—Շո՛ւտ, է՛, Խլը՛շիկ. շա՞տ պէտք է սպասել տաս։

—Ի՞նչ ես ուզում, ա՛խպէր, ինձանից. մի՞թէ բաւական չէ, ի՞նչ-որ եղաւ։

—Ի՞նչ եղաւ որ բաւական լինի. դեռ գնալու տեղ շատ ունենք։

—Ո՞ւր պէտք է գնանք։

—Խնամի աղուէսին հիւր։

—Ինչե՞ր ես ասում... ինչե՞ր ես ասում... Երեսիդ խաչահանի՞ր։ Ա՛յ մարդ, մի՞թէ քրիստոնեայ չես։

—Ի-հարկէ-որ քրիստոնեայ եմ. հապա հօ քեզ պէս ա՞նմեռոն չեմ։

—Դէ՛, ինքդ ասա. ինչպէս կարելի է հիւր գնալ խնամի աղուէսին։ Մէկէլ տեսար՝ նա ինձ էլ ու քեզ էլ...

—Դու շների համար էլ միևնոյնն էիր ասում,—ընդհատում է նրան Ցոլակը.—բայց ինչպէս տեսար, քեզ ձեռք էլ չտուին։

—Այո՛, բայց շներն այնքան էլ ոչինչ, սակայն նրան խնամի աղուէս կ'ասեն, գիտէս թէ ոչ։ Եթէ մենք նրա ճանկն ընկնենք, նա թէ՛ ինձ կ'ուտի և թէ քեզ կը-կծի... բրա՛։

—Կը-ներես. ես ոչ վախկոտ եմ և ոչ ա՛նխելք, որ երբ նա վրաս յարձակուի՝ ձեռքերս ծալեմ և թոյլ տամ որ նա իր ուզածը անի—կծի կամ ուտի։ Նա քանի գլուխ ունի, որ կարողանայ ինձ կծել կամ վնասել։ Եթէ նրան խնամի աղուէս են ասում, ինձ էլ քաջ տղամարդ կ'ասեն։ Իսկ դու գիտէս, ինչ ասել է քաջ տղամարդ։

—Ո՛չ, չգիտեմ,—պատասխանում է Խլըշիկը։

—Քաջ տղամարդը նա է, ով վտանգ եղած ժամանակ ձեռքերը չի ծալում ու անգործ մնում, ոչ էլ փախուստի մասին է մտածում և կամ ուրիշից օգնութիւն սպասում. այլ ճիգուջանք է անում—ամեն

կերպ աշխատում որ անպատճառ յաղթի իր թշնամուն։ Որովհետև քաջ տղամարդը լաւ է համարում պատուաւոր կերպով մեռնել, քան-թէ անպատիւ կերպով ապրել։ Հակացա՞ր, ա՛ Խլըշիկ։

—Այո՛։

—Դէ՛ ուրեմն ա՛յն էլ իմացած եղիր, որ եթէ քո խնամի աղուէսը ձեռքս ընկնի, ես նրա մեծ պատուն ականջը կը-թողնեմ։

—Ո՛ւղիղ ես ասո՞ւմ, թէ հէնց միայն պարծենում ես։

—Անպիտան ու անշնորք մարդիկն են սուտ խօսում ու պարծենում, որ կարողանան իրանց անշնորքութիւնը ծածկելիսկ ես՝ այդ քո գիտեցածներից չեմ, պա՛րոն Խլըշիկ։

—Ա՛խ, երա՛նի, հազար երանի քեզ, որ այդպէս քաջ ես...։ Բայց գիտէս, շատ մեծն է. ապրում է՝ ա՛յ, մեր դիմացի բլրակից դէնը, մի խոր ձորում։ Մէկ օր հեռուից երբ ինձ տեսաւ... վրյո՛ւյ, Տէր Աստուած, ինչպէս վրապրծած վրաս յարձակուեց...։ Այն էր՝ հա՛... մաղ մնաց որ ճանկն ընկնէի... Վուրյո՛ւյ... հիմա էլ որ միտքս է ընկնում, միսս սարսռում, ջանս դող է ընկնում։ Իմ բաղդից

մոտիկ տուն պատահեց. իսկոյն ներս մտայ ու թաքնուեցի, թէ-չէ՝ գժուար-թէ ես ազատուէի այն հրէշի ճանկերից։

—Իսկ ձեր տունը որտեղ է։

—Ա՛խ, ինչ թողին մեզ որ մեր տունը թողնէին։ Ամեն բան խլեցին մեզանից. զրկուեցինք մշտական տանից էլ ու տեղից էլ։ Ինքս էլ մնացի գունէգուռն ընկած՝ թափառական. որտեղ մութը վրայ է հասնում, այնտեղ էլ մնում եմ և մի կերպ գիշերը լուսացնում։ Քանդուի, հիմնայատակ կործանուի, քարը քարի վրայ չմնայ մեր սիրուն կացարանը, մեր պապական շէն օջաղը աւերողի տունը։

—Դէ-որ մի բան եմ ասում,—նկատում է Յոլակը,—իսկոյն սրտիդ դիպչում է։ Էլ ինչպէս չասեմ, թէ վախկոտ ես. ոնց չասեմ որ միայն ականջներդ են երկարել, իսկ խելքդ էլի նոյնն է մնացել։ Ասածիս ապացոյց այն՝ որ դու մինչև անգամ ապահով գիշերելու տեղ էլ չունես, այն-ինչ խնամի աղուէսը՝ ով գիտի, այնպիսի տուն-ու-տեղ ունի, որ չա՛տ-չատերը կը-նախանձէին նրան։ Իսկ դրա պատճառն այն է, որ տեղն եկած ժամանակ նա քաջ է. ինչքան-որ հնար է՝ դիմադրում է իր

թշնամուն. իսկ երբ քաջութիւնը քիչ է լինում, խելքն է գործ դնում։ Եւ հէնց դրանից է որ նա շատ անգամ է ազատ մնում վտանգից։ Իսկ ով այդպէս կ'անի, այսինքն միշտ խելօք ու քաջ կը-լինի, նա ոչ մի պակասութիւն չի ունենալ, նա ամենաանհրաժեշտ բաներից զրկուած չի մնալ քեզ պէս։

—Ինչ արած, ես քչով բաւականացող մարդ եմ։ Ճիշտ է, լաւ չէ որ սեպհական տուն չունեմ, բայց այս կայ՝ որ ճարածս միշտ անփոդ է լինում. երբէք տան վարձ չեմ տալիս։

—«Ճարածս միշտ անփոդ է լինում. երբէք տան վարձ չեմ տալիս»,—տնազ է անում Յոլակը։—Թո՛ւհ, ամօթ քեզ. փոխանակ ամաչելու, դեռ պարծենում էլ ես։ Պատուաւոր ու խելքը գլխին մարդու համար քո վարած կեանքը կեանք չէ, այլ ուղղակի բարոյական մահ։

—Համաձայն եմ հետդ, շատ ճշմարիտ ես ասում, բայց...

—Առանց բայց-մայցի,—զայրացած կըտրում է նրա խօսքը Յոլակը։ Էլ բայց-ս որն է։ Երբ գիտես, երբ հասկանում ես, թէ մի բան վատ է, անպատուաբեր է, ձեռք վերցրու և

էլ մի անիր, պրծաւ-գնաց։ Ինչպէ՞ս, վեր կաց գնանք խնամի աղուէսի մօտ և դու քո սեպհական աչքով տես, թէ քաջ մարդիկ ինչպէս են յաղթում շատ զօրեղ կարծուած անյաղթելի թշնամուն։

—Իմ ինչի՞ս պէտքն է այդ թամաշէն։ Եթէ քեզ լսեմ ու հետդ գամ, այդ միևնոյն թէ ինքս իմ ոտով գնամ մահի բերանն ընկնեմ։

—Տօ, մնխելք, հապա ես ո՞րտեղ եմ. էլ ո՞ր օրուայ համար է իմ բարեկամութիւնը։ Իսկի կը-թողնե՞մ որ նա մատով էլ է քեզ դիպչի։

—Լաւ, արի, նստիր. միայն խնդրում եմ՝ շատ էլ սաստկութեամբ մի՛ քշիր։

—Մի վախենար, կամաց կը-քշեմ։

Ցոլակը նստում է Խլըշիկի մէջքին ու գնում են ուղիղ դէպի այն ձորը, ուր ապրում էր խնամի աղուէսը։

Բ

Իսկ խնամի աղուէսն այդ միջոցին իր բնի—կացարանի առաջ պպզած ու աչքը յառած ծառին նստած թռչուններին, բերանի ջուրը կուլ էր տալիս և մտքումն ասում.

«Արդեօք ո՞նց անեմ, հը՞. ի՞նչ հնար գործ դնեմ, որ կարողանամ ձեզ ձեռք գցել, այ չլուսպուրիկ—խայտաբղէտ, սրակտուց թեռուններ»։

Աղուէսն այդ մտմտուքի մէջ էր, որ Ցոլակն ու Խլըշիկը սկսեցին իջնել բլրակի միւս լանջից դէպի ձորը։ Նրանք թէև աղուէսի աչքովն ընկան, բայց արեգակը դիմացից լինելով՝ չէր թողնում նրան լաւ տեսնել. ուստի նա էլ ականջները խլրշեց—սրեց։ Եւ այդպէս աչքերի ու ականջների օգնութեամբ կարողացաւ միքիչ գլխի ընկնել—հասկանալ։

«Այս էլ ի՞նչ նոր բան է։ Կարծես եկողը տղայ է, որ նապաստակին ձի է շինել ու վրէն նստել։ Թէ՞ պառաւելուց աչքերս փառակալել, լաւ չեն տեսնում»։

Աղուէսը թաթերով աչքերը հաղաղեց—տրորեց՝ որ պարզուեն, ապա սրուլիկ—սրածայր դունչը երկարացնելով՝ սկսեց օդը հոտոտել ու ինքն իր հետ խօսել.

«Կարծես հաւանոցի անմահական հոտ լինի, չէ՞... Ա՛խ, ո՞ւր է, երանի չէ՞ր լինիլ, եթէ այդպէս լինէր այս ճլաւ-ճլաւին անող—քաղցից ճլճլացող դատարկ փորիս»։

Ցոլակը վաղուց նկատած լինելով աղուէսին, մոռացել էր խոստումը, ուստի հայհարայ քշում էր։ Երբ բաւական մօտեցան,

Խնամի աղուէսը։

աղուէսի զարմանքը աւելի կրկնապատկուեց։

«Վա՛յ, ձեզ մատաղ,—ասում է աղուէսը,

—ուրեմն աչքերս ինձ չխաբեցին. ուղիղ էր տեսածս։ Ես իմ օրումն այսպիսի հրաշք չեմ տեսած...։ Ինչ՞ը ասես, որ աշխարհումս չպատահի»։

Աղուէսն այսպէս խօսելով, շտապով տեղից վեր է ցատկում ու փնթփնթալով մրտնում բունը.

«Գրո՞ղը, ան-գրո՞ղը տանի ձեզ... էլ ինչ ասել կ'ուզի որ դուք իմ մորթու համար էք եկել»։

—Բան չկայ,—ասում է Ցոլակը.—կըսպասենք մինչև նորից դուրս գաս։

—Գլուխը քարը թէ չի դուրս գալ,—ասում է Խլըշիկը.—էլ ինչո՞ւ սպասենք. աւելի լաւ չէ՞ որ յետ գնանք։

—Եթէ պէտք է դատարկաձեռն յետ դառնայինք, էլ ինչո՞ւ համար էինք գալիս։ Ես քո փորացաւը գիտեմ. քո ուզածն այստեղից հեռանալն է, որովհետև աղուէսի ահից էլի դողդ բռնել է։ Բայց դու պէտք է լաւ գիտենաս, որ խելքը գլխին, օրինաւոր մարդը երբ մի գործ է սկսում, պարտաւոր է մինչև վերջը հասցնել և ո՛չ-թէ սկսած գործը կիսատ թողնել ու յետ քաշուել։ Անխելք ու անշնորք մարդիկն են այդպէս անում—սկսած

գործը կիսատ թողնում, պարոն Խլրշիկ. իսկ ես դրանցից չեմ. կը-սպասեմ մինչև խնամի աղուէսը դուրս գայ։

Սակայն աղուէսը դուրս գալու միտք չունէր։

Շատ սպասելուց Ցոլակի համբերութիւնը հատնում է, ուստի վերցնում է մի հոնի դագանակ, բնի առաջ գետնին տփտփացնում ու ձայն տալիս.

—Խնամի աղուէս, ա՛յ խնամի աղուէս, դուրս եկ, քեզ մօտ հիւրեր են եկել։ Այդ ի՞նչ մարդավարութիւն է. ես չգիտէի թէ դու այսպէս անքաղաքավարի ես եղել։ Մի՞թէ կարելի է հիւրերից թաքնուել. չէ՞-որ հիւրը Աստծունն է. ուրեմն էլ ի՞նչ ես ականջներդ այգեպանի ականջ չինել, որպէս-թէ չես լսում։

«Այս էլ ի՞նչ նոր բան է,—ինքնիրան բարկանում է աղուէսը։—Ի՞նչ յանդգնութիւն. մէկ տեսէ՛ք թէ ի՞նչ լեզուով են խօսում...։ Ի՞նչ թոկից փախածներն են. հիմա ո՞վ գիտէ թէ բունս էլ մտնեն։ Ամեն բան հաւատալի է այդպէս յանդուգն մարդկանցից։ Ա՛սում եմ, է՛. ո՞վ էր տեսել նապաստակը ձի դարձած։ Ես իմ օրումը երբէ՛ք այսպիսի բան չէի տեսած, երբէ՛ք»։

Եւ մէկէ՛լ՝ աղուէսի սրտին շատ դիպչում է այդ բանը—իրան սաստիկ վիրաւորուած է զգում. նրա գլուխը չի վերցնում որ ինքը մոխրագոյն աղուէսը լինի և նրանք—այն մի մատը երեխան ու վախկոտ նապաստակը համարձակուեն, անվախ ու աներկիւղ իր բնին մօտենան և այդպէս համարձակ լեզուով խօսեն իր հետ իր սեպհական տան դռանը։

Ահա՛ այդ մտքերից զրգուած աղուէսը գլուխը դուրս է հանում և ատամները ժրնգ-ժնգացնում—սպառնում։

Ցոլակը՝ որ փայտը ձեռքին բնի վերև պատրաստ այդ բանին էր սպասում, իսկոյն վրայ է բերում ու տրա՛ք... ուղիղ կարկաժի—գանգի՝ էէ՛... մէջտեղին մի լաւ հասցնում։

Հարուածն այնպէս սաստիկ էր ու փառաւոր, որ նոյնիսկ նապաստակը մոռացաւ իր ահն էլ ու մահն էլ և սկսեց փառ-փառ ծիծաղել։

—Ու՜հ,—ցաւագին կախկանձում է աղուէսը և գլուխն իսկոյն ներս տանում։

«Տէր Աստուած, ի՞նչ անպիտաններն են եղել։ Տեսա՞ք այս անպատուութիւնը...։ Այսպէս բա՞ն...։ Ուրեմն ա՛յս օրին էլ հասայ, էլի՛...։

Ո՛չ, ո՛չ,—զայրացած բացականչում է աղուէսը.—այս արդէն չափն անցաւ։ Մի քիչ սպասեցէք, յանդուգն ստահակներ. բաւական է որ իմանամ, թէ ինչ էք անում այդտեղ, այնուհետև ես ցոյց կը-տամ այդ նապաստակին, թէ ինչ ասել է՝ իր վերմակից երկար ոտը մեկնել։ Իսկ այդ կապելու գիժ մանչուկին... նրա էլ մեծ պատառը ականջը կը-թողնեմ»։

Եւ աղուէսը փորսոդ-փորսոդ մօտենում է ընի բերանին ու ծկրակում—աչքի տակով ուշի-ուշով մտիկ տալիս—դիտում, որ իմանայ նրանց մտադրութիւնը. սակայն տեղն անյարմար լինելով՝ չի կարողանում բան տեսնել։

Ցոլակը գալուն պէս նկատել էր ընի վրայ բուսած բարակ թմբին—փոքրիկ ծառիկը։ Նա մտքին դնում է հեշտութեամբ բռնել աղուէսին։ Այդ նպատակով զրպանից հանում է մի դազիլ—այծի մազից հիւսած բարակ թոկ, ճկում—կապնում է թմբի ծառիկն ու դազիլիցը մի օղակ շինում, կապում ծայրին, ապա օղակը կախ անում ընի դիմաց և այդպէս դարան մտած սպասում։

Օղակն այնպէս լաւ է գալիս մուտքի բերանին, որ նոյնիսկ խորամանկ աղուէսը գլխի չի ընկնում—չի հասկանում, թէ իրան ինչ վտանգ է սպառնում։

Անորոշ դրութիւնից խնամի աղուէսի բարկութիւնը դաղաթնակէտին է հասնում. նա էլ չի կարողանում համբերել։

«Ախր այս ինչ բան է,—ասում է աղուէսն ինքնիրան.—չարունակ հօ բանտարկուած չեմ մնալու. սրա ճարը պէտք է գտնել թէ ոչ։ Ես սովոր չեմ այսպէս անորոշ դրութեան մէջ ապրել. մեռնելը հազար անգամ լաւ եմ համարում այս տեսակ ապրելուց։ Այսպէս անորոշ դրութեան մէջ մնալը կատարեալ խայտառակութիւն է. լաւ է՝ կամ դէս լինի, կամ դէն... Քիչ է մնում, թէ սիրտս ճաքի. մի որևէ անտուն-անտեղ թափառական նապաստակ և մի փոշնքոտ աղայ, որի բերանից դեռ կաթի հոտ է գալիս՝ համարձակուեն գան ու իմ սեպհական կացարանում այսպէս համարձակ, այսպէս յանդուգն կատարներ անեն ինձ հետ...։ Ախ, դու, ինսա՛ն կտոր մանչուկ. մանաւանդ դու, նապաստակի լակոտ...։ Մուշտակս դեռ մի կողմը մնայ, մենակ իմ սիրուն, բրդոտ պոչս աւելի թանգ արժի ձեր երկսի գլխից, գիտէ՞ք թէ ոչ։ Սպասեցէ՞ք, հիմա ես ձեզ ցոյց կը-տամ»։

Աղուէսն այդ ասելուն պէս իսկոյն ականջները ծալում, վզին է կպցնում, Խլըշիկի վրայ զարգանդ—սոսկումն բերող փիրուզագոյն աչքերը չռում ու գլուխը բնից դուրս բերում։ Բայց նոյն րոպէին էլ վեր է թռչում և մնում օդում կախ ընկած, ոտերը բեալդի-բեալդի անելիս—օդում արագ-արագ շարժելիս։

Խլըշիկը աղուէսի յանկարծակի բնից դուրս գալուց լեղապատառ է լինում ու կպչում գետնին, չունչը-մունչը փորը գցում։ Բայց երբ տեսնում է աղուէսին ծառից կախ ու ոտերը օդում բեալդի-բեալդի անելիս, արմանք-զարմանքից վեր է քաշվում ու մնում ապշած, աչքերը պլըզըցրած—չռած—լայն բացած՝ աղուէսին նայելիս։ Խեղճն իր աչքերին չէր հաւատում։

Սակայն այդտեղ ոչ ապշելու բան կար, ոչ էլ արմանալու կամ զարմանալու. այդ մի շատ հասարակ բան էր։

Բնից դուրս անցած-դարձածից անտեղեակ աղուէսը հէնց-որ գլուխը դուրս է բերում, օդակը վիզն է ընկնում, իսկ Ցոլակն անմիջապէս ճկած թմբին բաց է թողնում, որ իսկոյն ուղղուելով՝ աղուէսին էլ վեր է բարձրացնում իր հետ։

Աղուէսին նայելը կատարեալ թամաշա էր։

Նա ինքնիրան թափահարում էր, որքան իրանում ոյժ կար, ոտները շարունակ բեալդի-բեալդի անում, դէսուդէն ձգձգվում, վեր-վեր թռչում, մէկ խօսքով՝ ամեն կերպ ճիգուջանք էր անում որ ազատուի. սակայն իզո՞ւր. ոչ մի կերպ այդ նրան չէր աջողվում։ Ղազիլը շատ էր ամուր, կտրուելու միտք չունէր։

Աղուէսը քանի շարժվում էր, կամ ծլունգ-ծլունգ լինում—վեր-վեր ընկնում, այնքան էլ հանգոյցը—կապը աւելի և աւելի էր ձրգվում, նրա վիզն աւելի հուպ տալիս—սեղմում։

Աղուէսը ցաւից ուշաբերվում—խելքի է գալիս։

«Ի՞նչ յիմարն եմ,—ասում է մտքումը.—խելքս ո՞րտեղ է, որ թշնամիներիս աչքի առաջ այսպէս շարշարվում եմ, նրանց հացին եղ քսում—նրանց ուրախացնում, վրաս ծիծաղացնում։ Ո՛չ, լաւ չեմ անում. այսպիսով բան չի դուրս գալ։ Ուրեմն էլի լաւն այն է խորամանկութիւնս ձեռք առնեմ. ստամեռնուկ տամ—սուտ սատկած ձևանամ։ Սրանք խաբուելով՝ ինձ վայր կ'իջեցնեն, իսկ ես իս-

կոյն վեր կը-թուչեմ ու հայդէ... կը-փախչեմ»:

Եւ աղուէսը դադարում է ոչ մի շարժում անելուց. փակում է աչքերն ու մնում անշարժ կախ ընկած, խոկ-և-խոկ ինչպէս սատկած:

Սակայն Ցոլակը չի խաբվում. նա իր պապի պատմածներից գիտէր, որ աղուէսները կեղծաւոր ու անպիտան մարդկանց պէս խորամանկ են լինում, որոնց ասածն ու արածը հալած իւղի տեղ չպէտք է ընդունել—զուտ ճշմարտութիւն չպէտք է համարել. իսկ նրանց հետ գործ ունենալիս, շատ զգոյշ պէտք լինել. երբէք նրանց չհաւատալ լիովին, այլ հարկաւոր է միշտ կասկածել նրանց վրայ:

—Հը՛-հը՛, խորամանկ անպիտան, դու այն պտուղը չես որ միքիչ վիզդ հուպ տալուց այդպէս շուտ սատկէիր,—ասում է Ցոլակն ու վերցնում հոնի ահագին դագանակը և շրջում աղուէսի ջանին, տուր թէ կը-տամ՝ վերթակում:

Բայց աղուէսը դիմանում է այդ սարսափելի հարուածներին ու չի շարժվում:

—Ո՛չ, խորամանկ, ոչ. ինձ չես խաբիլ, դու միայն ստամեռնուկ ես տուել: Ես հիմա գիտեմ, թէ ինչ կ'անեմ քեզ:

Ասում է Ցոլակը, գրպանից մի կլոր քար հանում և վրայ բերում ու տալիս աղուէսի ճիշտ ականջակոթին—քներակին:

Այդ անսպասելի սաստիկ հարուածից աղուէսը ցնցվում է:

—Ը՛հը՛... կերաւ. այդ քո խաբեբայութեան համար արժանի պատիժ: Երևի այդպէս բան չէիր սպասում, այնպէս չէ՞. ուրեմն միւս անգամ էլ չխաբես, անպիտան:

Բայց Ցոլակը քարով տալն էլ քիչ համարելով, մօտենում է աղուէսին և բռնում նրա բրդոտ պոչից ու կախ ընկնում: Աղուէսն սկսում է խրխռացնել:

Ցոլակն այդպէս կախ ընկած այնքան է ճաճվում դէսուդէն, որ աղուէսը դադարում է խրխռալուց և բոլորովին թուլանում:

Երբ Ցոլակը ծառիկը ճկում է, որ սատկած աղուէսին վայր բերի, Խլըշիկը լեղապատառ ձայն է տալիս.

—Է՜յ, է՜յ... այդ ի՞նչ ես անում. հօ չե՞ս գժուել...:

—Ի՞նչ է:

—Ի՞նչպէս թէ՝ ինչ է... ինչպէս կարելի է այդպէս անզգոյշ լինել. չէ՞-որ դա կարող է վեր ցատկել և յարձակուել մեզ վրայ:

—Ո՛չ, սիրելիս. սրա բանը պրծաւ, սրա ժամն ու պատարագը դուրս եկաւ-վերջացաւ. սա այլևս չի վերկենալ։ Եթէ չես հաւատում, մօտեցիր, ձեռքդ դիր վրան և կը-համոզուես։

—Ի՞նչ լօթին է, է՞—նկատում է Խլըշիկը.—ինձ ասում է մօտեցիր ու ինքը հեռու է կանգնում, որ կարողանայ շուտ կծիկը դնել—փախչել, եթէ վտանգ լինի։

—Նախ՝ վտանգ չկայ,—ասում է Ցոլակը.—երկրորդ՝ քեզ նման թուլասիրտ վախկոտներն են վտանգից փախչում այդպէս շուտ. երրորդ՝ անպիտան մարդիկն են իրանց ընկերին թողնում մենակ վտանգի մէջ ու իրանք փախչում և վերջապէս չորրորդ՝ որպէսզի համոզուես, թէ ես ոչ վախեցողն եմ և ոչ աղուէսը նորից կենդանացողը, ահա, տես։

Ասում է Ցոլակը և մօտ գնում, աղուէսին ոտքով դրդում, պոչից ձգում, ականջներից քաշքշում։

—Տեսնո՞ւմ ես, ա՛ Խլըշիկ։

Խլըշիկը թէև համոզվում է, բայց-և-այնպէս ահուդողով, կամաց-կամաց տոտիկները փոխելով մօտենում է աղուէսին, վիզը երկացնում և՝ խլշած ու աչքերը չռած հէնց

այն է կամենում է թաթլիկը դնել աղուէսի պոչի ծայրին, որ մէկէլ յանկարծ Ցոլակը մի փառաւոր ծափ է տալիս։

Այդ անսպասելի ձայնից Խլըշիկը զրկի-փրկի—յանկարծակիի եկածի նման տեղից այնպէս է ծլունգ լինում, որ տասը գազ դէնն է ընկնում և աչքերը լայն բաց արած՝ աղուէսին է դիտում հեռուից։

Բայց երբ տեսնում է որ աղուէսը առաջուայ նման էլի պառկած է անշարժ, իսկ Ցոլակն էլ շարունակ դէսուդէն է քաշքշում, շուռումուռ տալիս, ինքն էլ է մօտենում, որ լաւ տեսնի, թէ ինչ բանի է իր բարեկամը։

Ցոլակը սկսել էր մաշկել—մորթազերծ անել աղուէսին։

Այդ բանից նապաստակի վրայ զարդանդ եկաւ և նա սկսեց զնգըր-զնգըր դողացնել. որովհետև նրա մտքովն անցաւ.

«Հապա եթէ դրանից յետոյ էլ ինձ բռնի ու մաշկի՞»...։

—Ի՞նչ է, Խլը՛շիկ. ինչո՞ւ ես այդպէս դողում։ Չլինի՞ թէ էլի բռնեց վախկոտութիւնդ։ Թ՛ուհ... քեզ մարդ ասողին...

—Ո՛չ,—ասում է ամօթահարուած Խլըշիկը.—ես... ես վախից չեմ դողում... ես

աղուէսից էլ չեմ վախենում, այլ... ա... այնպէս...

—Այսինքն ցրտից ես դողում, հա՞: Լաւ, թող այդպէս լինի: Դէ՛, մէկ արի, ինձ օգնիր, որ լաւ մաշկեմ, մորթին չծակուի, ափսոս է: Արի բռնիր:

«Այս մարդը հօ չի գժուել. ի՞նչ է ասում», —մտքի մէջ ասում է Խլըշիկը:—Հապա եթէ խնամի աղուէսը սուտ շտափած—ուշագնաց է ձևանում, յետոյ... Վը՛յ՛ՀՀ, նանի-ջա՛ն, ոնց կ'անեմ, եթէ իրաւ այդպէս լինի»:

—Դէ՛, շուտ, է՛. ախր, ժամանակ չկայ,—բղաւեց Յոլակը:—Ականջիդ բամբակը հանիր. քեզ ասում են որ վախենալու բան չկայ...: Վա՛յ, մէկ սրան մտիկ տուէք, թէ ինչպէս է դողում ուռի պէս...: Ամո՛թ: Մարդ այդպէս էլ կը-վախենա՞յ:

—Ե՛ս... ես... ա... ա... ամե... ամենևին էլ... էլ... էլ չեմ վախենում, այլ այնպէս...

—Լաւ, լաւ, թող այդպէս լինի. դէ՛, շուտ արի:

Երբ մաշկում-պրծնում են, Յոլակը դիմում է Խլըշիկին.

—Տեսա՞ր, սիրելի՛ Խլըշիկ. ահա այսպէս լաւ բան է քաջ ու անվախ լինելը. աղուէսը

ոչ քեզ կերաւ և ոչ ինձ կծեց, այլ դեռ իր մորթին էլ մեզ ընծայեց:

Յոլակը ինքնաբաւական կերպով մորթին դիտում է, թափ տալիս ու գցում ուսովը: Ապա գրպանից մի կեռ է հանում, աղուէսի ազդրի փափուկ մսից կտրում, ծայրին ամրացնում ու խրում զօտիկը: Պապի պատմածներից Յոլակը ոչ մի բան չէր մոռացել:

—Այդ ինչո՞ւ համար այդպէս արիր,—հետաքրքրուեց իմանալ Խլըշիկը:

—Հէնց այնպէս. ո՞վ իմանայ, կարող է պէտքը գալ: Հա՛, ինչպէս տեսար՝ ես ու դու խնամի աղուէսի հետ մեր հաշիւը վերջացրինք: Դէ՛, հիմա ասա՛, տեսնեմ. յոգնածութիւնդ անցա՞ւ:

—Այո՛:

—Ուրեմն գնա՛նք:

—Հիմա՞ ուր:

—Հիմա էլ վայրի-ծաղկակոխու մօտ հիւր:

—Այդ ո՞վ է. ես դրան չեմ ճանաչում:

—Ի՞նչպէս չես ճանաչում. քաւոր-գայլի համար եմ ասում:

—Կա՞տակ ես անում, թէ՞ լուրջ կերպով ես ասում,—զարմացած հարցնում է Խլըշիկը:

—Ամեն բան իր տեղն ու ժամանակն

ունի. այժմ կատակի ժամանակը չէ, այլ գործ չինելու։ Դէ, շուտ, մոտեցիր, մէջքդ դէմ արա, նստեմ, գնանք։

—Չէ, ախպէր, այս անգամ չեմ գալ։ Գիւղամիջով շների առաջից տալ-անցնելը... էլի մի կերպ կարելի էր. աղուէսի մօտ գալը՝ նոյնպէս. բայց գայլի մօտ գնալ՝ այս մէկը կը-ներես, ոչ մի։ Ժամանակ ես այդ չեմ անիլ։

Եւ Խլըշիկն սկսում է ականջները թափահարել, ոտները բարձրուցածը անել, կուտռուզ պոչը խաղացնել ու հետն էլ գլուխը շարունակ տմբտմբացնել, այսինքն թէ հաստատ եմ ասում որ չեմ գալ վայրի-ծաղկոխու մօտ։

—Դու միայն ինձ տար և նրա տեղը ցոյց տուր, ուրիշ ոչինչ։

—Կրկնում եմ որ չեմ կարող գալ. ես անկարող եմ նրան մօտենալ։

—Ի՞նչ կարիք կայ նրան մօտենալու. ինձ այն էլ բաւական է, եթէ հեռուից ցոյց տաս։

—Ո՛չ, ոչ... չեմ կարող... հաւատացնում եմ, չեմ կարող։ Տես, դեռ ոչինչ, բայց արդէն ծնկներս սկսել են դողալ։

—Այդ նրանից է որ դու վախկոտ ես։

—Ո՞վ է վախկոտ։

—Դու, պարոն Խլըշիկ։

—Իսկ միքիչ առաջ այդպէս չէիր ասում, —վիրաւորուած նկատում է Խլըշիկը։

—Զատ ուղիղ է. միքիչ առաջ ես այնպէս էի կարծում, թէ դու դարձել ես մի անվախ, մի պատուաւոր քաջ տղամարդ, որ իր նպատակին հասնելու համար ոչ մի վտանգից չի վախենում, յետ չի քաշվում. բայց այժմ պարզ տեսնում եմ որ սխալուել եմ՝ քո մասին այդպէս լաւ կարծիք կազմելով, քանի-որ դու էլի առաջուայ փալասն ես։

—Ո՞նց թէ՝ փալաս...։ Հապա շների մօտից վազէվազ անցնելս, հապա քեզ խնամի աղուէսի մօտ բերելս...։ Ո՛չ, կը-ներես. ես ոչ թէ փալաս եմ, այլ քաջ եմ, քաջ։

—Զատ լաւ. եթէ չես ուզում, որ քեզ փալաս կոչեն, այսինքն թոյլ ու վախկոտ անուանեն, եթէ ցանկանում ես որ ամենքն էլ քաջ ասեն քեզ, ուրեմն դու պէտք է ինձ գայլի մօտ տանես, որովհետև ես նրա տեղը չգիտեմ։

—Տեսնում ես այն պիպող բլրակը—սրածայր փոքրիկ սարը,—ասում է Խլըշիկը և թաթլիկը մեկնում։

—Այո. ինչու համար ես ասում։

—Ահա հէնց նրա մօտերքումն է ապրում վայրի ծաղկակոխին։

—Դէ, գոնէ մինչև այդ սարը տար, այնուհետև ինքս մենակ էլ կարող եմ գնալ։

—Եթէ այդպէս է, համաձայն եմ, այդքանը կարող եմ,—ասում է Խլըշիկն ու մէջքը դէմ անում։

Յոլակն իսկոյն նստում է ու ճամբայ են ընկնում։

Դեռ սարի ստորոտին չհասած, Յոլակն սկսում է խօսել՝ որպէս թէ ինքն իր հետ.

«Ախ, ափսոս մեր իշուկ, որ ոտը կոտրուեց, շատ ափսոս։ Երբ նստում էի վրէն, այնպէս էր գնում, այնպէս չափ ընկած վազում, որ մի աչքի ճպելում—մի ակնթարթում ահագին տարածութիւն էր կտրում-անցնում։ Երանի-թէ էլի նա լինէր իմ տակին...»։

«Էհէ՜... չլինի՞ թէ այդ քարը իմ բակը գցեց, կամ գուռնով է ինձ հասկացնում. չլինի՞ թէ սա ինձ չի հաւանում։ Սակայն ես ինչով եմ պակաս, այն էլ մի ուրեէ իշուկից»,—ասում է մտքի մէջ մեր Խլըշիկն ու չափ ընկնում սարնիվեր և մի ըոպէում սարի գագաթն էլ տալիս-անցնում։ Բայց այլևս չկարողանալով իր թափը պահել, հիմա էլ սարնիվար է սկսում վազել։ Խլըշիկն այնպէս արագ էր գնում, ինչպէս-որ սարի գլխից թոլարած—գլորած քարն է գլորվում դէպի ցած։

Խլըշիկն այնպէս արագ էր գնում, ինչպէս որ սարի գլխից գլորած քար։

Յոլակը հազիւ էր պահում իրան որ վայր չընկնի։

Բայց դեռ սարի ստորոտին չհասած, Խլըշիկը լեղապատառ գիրթ—մէկէնիմէկ կանգ է առնում։

Ցոլակն իսկոյն գլուխը բարձրացնում է և ինչ տեսնի. մի ահագին գայլ, որ դէպի իրանց էր գալիս։

Գայլի փորը վեց-վեց էր անում, այսինքն շատ էր քաղցած. ուստի երբ տեսաւ երկու որս իրանց ոտով դէպի իրան գալիս, ուրախութիւնից քիչ մնաց խելքը կորցնէր։ Նրա դատարկ ստամոքսը խաղն ընկաւ—ճլաւ-ճլաւին արաւ—ճլճլաց, բերանի ջուրը գնաց, աչքերը ծլաւ-ծլաւին արին ու պէծին-պէծին տուին։

«Արդեօք առաջ ո՞րին մաքրազարդեմ—խժռեմ—ուտեմ», մտածում է գայլը և քիչ-քիչ նրանց մօտենում։

Խեղճ Խլըշիկը երկիւղից կարծես քարացաւ տեղնուտեղը։ Իսկ Ցոլակը՝ որ գնացել էր գայլին անպատճառ յաղթելու նպատակով, աներկիւղ սպասում է գայլի մօտենալուն. իսկ մինչև այդ՝ գօտիկից հանում է մսով կեռը և վրայի թոկը յետ տալիս։

Երբ գայլն արդէն բաւականին մօտենում է, Ցոլակն անմիջապէս կեռը նրա առաջն է գցում։

Գայլն առանց երկար մտածելու, իսկոյն համփ է անում ու հախռում—բերանն առնում։ Ի՞նչ անէր, քանի-որ տեսածը արիւնաթաթախ միս էր, իսկ ինքը անչափ սոված։ Ուստի հախռելուն պէս դամփ-դամփ է անում ու մի կտոր կուլ տալիս, մի եր-

Վայրի ծաղկակոխին։

կրորդ կտոր էլ նոյն ձևով լափում է, բայց երրորդում ծուղակն է ընկնում. կեռը խրվում—ցցվում է նրա կոկորդի մէջ։

—Գայլը յանկարծակի—զրկի-փրկի եկածի նման սկսում է վեր-վեր թռչել, դէսուդէն ընկել, հաղալ, բիկալ, զկոտալ, թանթլիկները յուսահատաբար քսել երեսին, որպէսզի կոկորդն ազատի սարսափելի ցաւից, սակայն իզուր. այդ հնարներից ոչ մէկն էլ չի օգնում։

Ցոլակը երբ տեսնում է թէ կեռը լաւ է ցցուել նրա կոկորդի մէջ, իսկոյն վազում է դէպի մօտիկ ծառն ու ձեռքին բռնած թոկի միւս ծայրը գիւրով տալիս—փաթաթում

ծառի բնին ու ամուր կապում։ Ապա վերցնելով հոնի ահագին դագանակը, ընկնում է գայլի ջանին և զորս դու պատուիրեցեր՝ տուր որ կը-տաս—սոսկալի հարուածներ հասցնում։

Սարսափելի ցաւից գայլն սկսում է ոռնալ, գոռալ, մռնչալ և գայրութից—սաստիկ բարկութիւնից՝ կեռին կապած թոկը կրծել որ կտրի։ Բայց դրանով նա իր տունն է քանդում—իր դրութիւնը աւելի դժուարացնում։ Որովհետև քանի նա կրծելով թոկը՝ հուսի էր տալիս—սեղմում որ կտրի, այնքան էլ կեռը աւելի և աւելի խորն էր մտնում։

Գայլի աչքերը այնպէս արիւնակալեցին—արիւնով լցուեցին, որ թվում էր թէ՝ հիմա ուրտեղ որ է, պէտք է դուրս տրաքուեն։ Լեզուն կախ է ընկնում, մազերը փշաքաղվում են և նա նորից սկսում է դէսուդէն անել, թանթլիկները երեսին քսել. բայց երբ տեսնում է թէ էլի բան չի դառնում, կրկին սկսում է իր զոռոցը, այն էլ այնպէս սաստիկ, որ նրա ձայնից սար, ձոր ու անտառ սկսում են թնդալ ու դրմբդրմբալ։

—Դէ՛, վագիր, սիրելիս,—դիմում է Ցոլակը թուք-ու-մուքը ցամաքած ու ահից լեզուն փորն

ընկած նապաստակին—վագիր գնա, բժիշկ կանչիր. մի՞թէ չես տեսնում, որ վայրի-ծաղկակոխին խեղդվում է... Բայց ո՛չ, հարկաւոր չէ, ինքս էլ կարող եմ օգնել։ Ինչպէս տեսնում եմ՝ կոկորդի մէջ բան է մնացել. որպէսզի դուրս գայ, հարկաւոր է միքիչ տփտփել ու վեր հատել—խփել մէջքին։

Եւ Ցոլակը կրկին ձեռքն է առնում հոնի դագանակն ու վրայ բերում գայլի՝ ճիշտ կարկաժի—գանգի մէջտեղին տալիս և ետ քաշվում։

Այդ հարուածից վայրի-ծաղկակոխին մի զաղ ծլունգ է լինում։

Ցոլակը կրկին մօտ է գնում և դնչին այնպէս ծեփում—խփում, որ գայլը մաղիկ-մաղիկ, տապակ-տապակ է դալիս, ոռնում, կոնձկոնձում, բայց հետզհետէ աւելի թոյլ, աւելի կամաց ու կամաց և վերջապէս խըրխռոցն է ընկնում։

—Է՛, հիմա սա առանց մեղ էլ կը-սատկի,—ասում է Ցոլակն ու շուռ գալիս դէպի Խլրշիկը, որ կուչ եկած, փորսող տալով իրան էր մօտենում։

Խեղճի աչքերի փայլը բոլորովին գնացել էր, ականջները ցնցվում էին, ատամները կափ-

կափում—իրար դիպչում. նա շարունակ՝ «հիւ-հա-հիւ, հիւ-հա-հիւ»... փնչացնում էր և ահ ու դողով խլրշում ու խլրշկոտում։

Ցոլակն անկարող լինելով իրան պահել, մի այնպիսի քրքինջ է բարձրացնում, որ Խլրշիկը վիրաւորուելով՝ նկատում է.

—Չեմ հասկանում, թէ ի՞նչ կայ այդպէս ծիծաղելու։

—Տօ, լօշտակականջ, ո՞վ լինի, որ քեզ այդպէս տեսնի ու չծիծաղի, նոյնիսկ տնաղ չանի։ Մի՞թէ չես տեսնում, որ վախենալու բան չկայ։

—Բայց ես... ես...

—Գիտեմ, գիտեմ,—նրան ընդհատում է Ցոլակը.—երևի թէ դու չես վախենում, այլ... այնպէս։ Լաւ, եթէ այդպէս է, ուրեմն գնա՛ օգնիր նրան, մեղք է։

Սակայն ի՞նչ օգնել, Խլրշիկը մեռած էր ու կենդան չէր. նա շատ վաղուց կը-լինէր կծիկը դրած—փաթած, բայց արմանք-զարմանքից մնացել էր վեր քաշուած, թէ ախր այս ի՞նչ հրաշք է, որ այդ մի մատը մանչուկը—փոքրիկ տղան, որին ինքն իր մէջքի վրայ բերաւ, կարողացաւ ոչ-միայն ազատէսին, այլև այդ անագին գայլին սպանել։

«Բայց սա հօ մենակ չէր կարող գալ, այլ ես բերի—մտածում է Խլրշիկը։—Այո՛, ես բերի սրան այստեղ... ես, ես՝ Խլրշիկս»։

Եւ նապաստակը ներքին բաւականութիւնից դադարում է փնչալուց։

Գ

Խլրշիկ,—ասում է Ցոլակը,—թողնենք գայլը մնայ այստեղ, յետոյ կը-գանք, կը-մաշկենք. իսկ հիմա գնանք։

—Էլի ո՞ւր։

—Չէ՞-որ դու հիմա բոլորովին քաջ ես, այնպէս չէ՞։

Խլրշիկը հպարտութեամբ դեռ կնդով է անում, որպէս հաւանութեան նշան, և ապա սկսում ետի ոտերով ցրիւ տալ ձիւնը և յետոյ ասում.

—Ի-հարկէ-որ քաջ եմ. չէ՞-որ ինքս բերի քեզ այստեղ։

—Շատ բարի. դէ հիմա էլ ո՞ւր գնանք մի ուրիշ տեղ։

—Դու հէնց մի-գլուխ—շարունակ ասում ես գնանք, բայց չես ասում թէ ո՞ւր։

—Փնթփնթան-ապօր մօտ հիւր։

—Այդ ո՞վ է. ինչ տարօրինակ անուն ունի։

—Տօ, անպոզ անասուն, ո՞ւրջի մօտ, էլի՜։

—Դէ՛, այդպէս պարզ ասա, որ հասկանամ, է՞։

—Մեծ մարդկանց անունը տալիս, միշտ փութ-անունով—մակդիրով են ասում։

—Է՛հ, նրա անունն էլ կտրուի ու ինքն էլ։

—Սակայն դու մօտկանց երբևիցէ արջ տեսած կա՞ս։

—Շատ, ինչքան ուզում ես. այնքան շատ՝ որ եթէ տասը տարի չտեսնեմ, դարձեալ չեմ ուզիլ նորից տեսնել նրա երեսը։

—Բայց ես շատ եմ ուզում տեսնել, դու պէտք է ինձ նրա մօտ տանես։

—Դժուար թէ կարողանամ, որովհետև ոտերս շատ են ցաւում։

—Դէ՛, դէ՛... խնդրեմ, սուտ-սուտ բաներ չհնարես, ամօթ է։ Լսողն ինչ կ'ասի. չէ՞-որ կ'ասի՝ վախկոտ ես։ Բայց, փառք Աստուծոյ, դու քաջ ես և ոչ վախկոտ. ուրեմն էլ ինչո՞ւ ես սուտ խօսում։ Երևի-թէ յոգնած ես. հէնց

այդպէս էլ ճշմարիտն ասա. որովհետև յոգնելն ամօթ չէ, այլ սուտ խօսելն է ամօթ և այն էլ՝ մեծ ամօթ։

Մի քիչ հանգստանալուց յետոյ Խլըշիկը Ցոլակին շալակն է առնում ու ճամբայ են ընկնում։

Նապաստակը գնում էր ու ինքն իրան մտածում.

«Եւ իրաւ, փնթփնթան-ապէր է, թէ ինչ քար-ու-քացախ է, նա ինձ ինչ կարող է անել, քանի-որ սրա նման քաջ ու անվախ մարդը հետս է լինելու, և վերջապէս փախչել միշտ կարող եմ. ծանրագոգոթ—դանդաղաշարժ արջը հօ չի կարող ինձ հասնել որ բռնի»։

Սակայն չնայելով Խլըշիկի այդպէս մտածելուն, բայց-և-այնպէս էլի չի ուզում արջի մօտ գնալ, ուստի ասում է.

—Ես ոչ գիտեմ, ոչ էլ լսած եմ թէ որտեղ են բնակվում արջերը. բայց իմացածով՝ հեռու, ամնչափ հեռու պէտք է գնալ, ուրեմն ինչպէս կարող ենք այսօր տեղ հասնել, քանի-որ օրից բաւական անցել է։

—Էլի սկսեցիր փչել—սուտ խօսել. մի՞թէ չես հասկանում որ անպիտան մարդիկն

են սուտ խօսում։ Ազնիւ մարդը ոչ մի ժամանակ ոչ կը-ստի և ոչ էլ կը-խաբի։ Երեխան էլ կ'իմանայ, որ ինչ տեղ գայլեր են լինում, այնտեղ էլ արջեր կը-լինեն. իսկ մի՞թէ դու մի երեխայի չափ էլ հասկացողութիւն չունես...։ Ուղիղ գնա. այժմ դէպի աջ, այս կողմը անտառն աւելի խիտ է։ Փնթփնթան-ապէրը հիմա երևի իր բնի առաջ արևակող արած՝ փնթփնթալէ թանթլիկն է ծծում։

—Բայց քո ինչի՞ դէ պէտքը փնթփնթան-ապէրը. կամ դու ո՞վ, նա՞ ով։ Եւ վերջապէս գիտե՞ս ինչ են ասում նրա թանթլիկի մասին։

—Ո՛չ, չգիտեմ. ինչ են ասում,—հարցնում է Ցոլակը։

—Ասում են տասը փթի ծանրութիւն ունի։ Դէ՛, մէկ մտածիր, թէ ինչ սարսափելի բան կը-լինի, եթէ նա իր այդ տասը փթանոց թանթլիկով մարդու գլխի բամփի—խփի, մարդը այն գնալն է որ կ'երթայ, էլ յետ չի դալ, այսինքն բանն ու հոգին մէկ կը-լինի—իսկոյն կը-մեռնի։

—Մի՛ վախենար, մենք այդ օրը չենք ընկնիլ—մեզ հետ այդպէս բան չի պատահիլ։

—Ինչո՞ւ չի պատահիլ,—հետաքրքրվում է իմանալ Խլըշիկը։

—Նրա համար որ,—պատասխանում է Ցոլակը,—մենք յիմարի պէս գլուխնիս դէմ չենք անիլ, որ նա բամփի—խփի. վախկոտներն ու յիմարներն են այդպէս անում: Իսկ չէ՞-որ ես ու դու՝ և՛ խելօք, և՛ քաջ ենք:

Խլըշիկն՝ ուրախացած Ցոլակի խօսքերից, ինքնաբաւական կերպով միքանի անգամ իրար վրայ կնդով է անում:

—Խլըշիկ, սպասի՛ր քեզ մի քանի հարց տամ:

—Ի՛նչքան ուզում ես:

—Արդեօք անցա՞նք այնքան շների առաջից թէ ոչ:

—Այո՛, անցանք:

—Խնամի աղուէսին ծառից կախ տուի՞նք թէ ոչ:

—Այո՛, կախ տուինք:

—Լա՜ւ. վայրի-ծաղկակոխիին—քաւորդայլին որսացի՞նք թէ ոչ:

—Այո՛, ճիշտ է. իմ սեպհական աչքով տեսայ:

—Դէ՛, այդքան բանն անելուց յետոյ այժմ էլ կարող ենք ուղղակի հիւր գնալ փընթփնթան-ապօր մօտ:

—Ո՛ւղղակի նրա մո՞տ,—սարսափահար

հարցնում է Խլըշիկն ու դողոցն ընկնում:

—Դու խելք ունե՞ս, Խլը՛շիկ:

—Ի-հարկէ-որ ունեմ, հապա խօմ ա՞նխելք չեմ,—միքիչ վշտացած պատասխանում է նապաստակը:

—Դէ՛, եթէ խելք ունես, հապա էլ ինչո՞ւ ես մի բանը հարիւր անգամ կրկնել տալիս: Խելօք մարդուն՝ բանը մէկ անգամ կ'ասեն: Քեզ քա՞նի անգամ ասացի՝ թէ վախենալու բան չկայ, բայց դու էլի ուռի պէս դողում ես. ամօթ չէ՞...: Լա՛ւ իմացած եղիր որ ով քաջ չէ, նա օրինաւոր մարդ չէ, այլ վախկոտ, անպատիւ արարած, հետևապէս ապրելու էր անարժան: Հասկանո՞ւմ ես:

—Այո՛:

—Զատ բարի. էլի նորից կրկնում եմ որ փնթփնթան-ապէրը քեզ մատով անգամ չի դիպչիլ. լոշտակ-լոշտակ ականջներդ էլ, պաճօ քիթդ էլ ու կուտուուզ պոչդ էլ անվնաս կը-մնան:

—Իսկ մորթիս:

—Ա՛նհոգ եղիր, այդ էլ տեղը կը-մնայ. որովհետև քամին այնքան է թակել ու անձրևը ծեծել, որ մազերը կպել են կաշուին, դարձել թաղիք: Դէ՛, ինքդ ասա, արջի ին-

չ՞ին է պէտքը քո այդ անպէտք, քոնձռոտ—մազթափ մորթիդ։

—Ի՞նչ ես դու էլ այդպէս տնազ անում ինձ։

—Վա՛յ, դու քեզ-ու-քեզ չես մտածում որ իմանաս, թէ ո՛րն է լաւ և ո՛րը վատ, ուրիշի ասածն էլ դիտմամբ չհասկանալու ես դնում, հապա որ քեզ տնազ չանեմ, ո՞ւմը տնազ անեմ։ Հէնց ո՛վ էլ որ տեսնի քեզ՝ այդպէս գոյնդ-մոյնդ թռած, այդպէս դողդողիս, ո՛չ-միայն կը-ծիծաղի վրադ ու տնազ կ'անի քեզ, այլ շատ կարելի է, թէ վիրաւորի էլ՝ երեսիդ ասելով որ վախկոտ ես։

—Հա՜... վա՛խկոտ ես, վա՛խկոտ ես, առել-անցել ես. բայց-և-այնպէս դու առանց ինձ ոչինչ չէիր կարող անել...։ Սակայն խընդրեմ ասես, թէ այդ ի՞նչ է գոտկիցդ կախ ընկածը, որ շարունակ լափին-լափին տալով—գնալ-գալով՝ դիպչում է փորիս ու կողքիս և ցաւացնում։

—Թիթեղեայ անօթ է։

—Մի՞ջինը թարմ սիսեռ է՞։

—Ը՛հը՜... սրան մտիկ տուէք։ Տո՛, խելքի տոպրակ, այս ձիւն-ձմռանը թարմ սիսեռ կը-լինի՞։ Ինչպէս երևում է՝ ահից դու ունեցածդ խելքն էլ կորցրել ես։ Ո՛չ սիսեռ է և ոչ էլ զազար, դուր ախորժակ կը-պահես, այլ մեղր է։ Զէ՞-որ փինթփինթան-ապօր մօտ ենք գնում. ընծայ եմ տանում նրա համար։ Հասկացա՞ր։

«Քեզ ո՞վ կարող է հասկանալ, որ ես հասկանամ»,—մտքի մէջ ասում է Խլըշիկն ու դիմում Յոլակին.

—Երբ տեղ հասնենք-պրծնենք, ինձ կը-թողնե՞ս որ գնամ։

—Ինչո՞ւ։

—Ի՞նչպէս թէ ինչո՞ւ. մարդ պէտք է միքիչ էլ խիղճ ունենայ, է՞։ Ախր, այսքան ժամանակ շալակած տանել կը-լինի՞ որ քեզ տանում եմ։ Կոկորդս բոլորովին չորացել է։

—Երևի ծարաւել ես. բան չկայ, միքիչ համբերիր։

—Դու հէնց շարունակ կրկնում ես երեսիս, թէ վախկոտ ես։ Բայց ես ո՛չ-թէ վախկոտ եմ, այլ զգոյշ և համբերող։

—Վատ բան չէ, ընդհակառակը շատ լաւ բան է զգոյշ և թէ մանաւանդ համբերող լինելը. բայց չափից դուրս համբերելը իշի նահատակութիւն է։ Աւելին կ'ա-

սեմ՝ հարկ եղանից աւելի համբերելը ուղղակի յիմարութիւն է։

—Այդպէս է, հա՜. վայ իմ հախն է՜... Ինչ ասեմ... լոկ հետաքրքրութիւնից միքիչ անզգոյշ եղայ ու էլ չկարողացայ քեզանից ազատուել. ճանկդ ես գցել ու...

—Բայց կարծեմ որ քեզ որևէ վնաս չեմ տուել։ Եւ վերջապէս հապա ինչպէս կը-կամենայիր. ողջ օրը ծլունգ-ծլունգ լինելով, շարունակ տռճիկներ ու խնդրուզիներ տալով դէսուդէն վազվզել, հա՜։ Չէ՜, կը-ներես, այդ լաւ չէ։ Նախ՝ պարապութիւնը շատ վնաս է առողջութեանը, երկրորդ՝ մենակ մնալով՝ դու կարող ես բոլորովին վայրենանալ։ Ուստի հարկաւոր է մեծամեծ մարդկանց մօտենալ, հետները ծանօթանալ, նրանց հետ նիստուկաց ունենալ. մէկից մարդավարութիւն—քաղաքավարութիւն, միւսից լեզու, մի երրորդից ուրիշ-ուրիշ օգտակար բաներ սովորել։ Թէպէտ այս էլ կայ, որ մեծամեծները որքան լաւ են, տա՛ն այնքան էլ վատ են ու անպիտան։ Բայց հէնց դրա համար էլ մարդ որքան մօտիկից ճանաչի նրանց՝ տեղեակ լինի նրանց բնաւորութեան, նրանց սովորութիւններին ու մտադրութիւններին, այնքան

էլ օգուտ կը-լինի. որովհետև այդպիսով միշտ կարող է իր ժամանակին սպառնացող վտանգի առաջն առնել և աւելի ապահովացնել իր գոյութիւնը։

—Զատ ուղիղ է, համաձայն եմ. սակայն ո՞վքեր են այդ քո ասած մեծամեծները։

—Ովքե՞ր. շները, աղուէսները, գայլերը, իսկ դրանցից էլ բարձրը, այս անտառում եղած բոլոր գազաններից մեծը՝ փնթփնթան-ապէրը—այս անտառի իշխանը։ Ահա՜ մենք այդպիսի նշանաւոր մարդու մօտ ենք գնում, բայց դու դեռ նաղ էլ ես անում։

—Իսկ փնթփնթան-ապօրից մեծն ո՞վ է։

—Ե՛ս։

—Օ՜հո՜...

—Այո՛, ես, ես... որովհետև ես մարդ եմ, իմ խելքով դրանց ամենքից բարձր։ Հասկացա՞ր։

—Այո՛, այո՛, հասկացայ։

—Եւ զարմանալի էլ կը-լինէր, եթէ չհասկանայիր, քանի-որ ինքդ քո սեպհական աչքով տեսար ամեն բան։ Դէ՛, բաւական է, ինչքան գրոյց արինք. պէտք է շտապել, ժամանակն անցնում է...։ Զո՛ւտ, է՞։

Խլրշիկը մէջքը դէմ է անում։ Ցոլակը նրս-

տում է թէ-չէ, նապաստակը ջուխտլափակ—քառասմբակ վեր է կենում ու դիմում ուղիղ դէպի փնփնթան-ապէրը։

Իսկ փնթփնթան-ապէրը՝—որ բնի առաջ նստած, իր մաքերի հետ ընկած, արևակող էր արել,—երբ տեսնում է Ցոլակին ու Խլըշիկին դէպի իրան գալիս, մռթմռթում—փնթփընթում է.

«Հը՛մ, հը՛մ-մը՛մ, հը՛մ»։ Այսինքն-թէ՝

Ի՞նչ լաւ որ այս քաղցած փորիս՝ որսերը իրանք-իրանց ոտով են ինձ մօտ գալիս։

Ցոլակն իսկոյն մօտ է գնում, խորը գլուխ տալիս և ասում.

—Բարո՞վ մեր մեծափառ իշխանին։

«Հը՛-մը՛-հը՛-մը՛, հը՛մ-հը՛մ»։ Այսինքն-թէ՝

Մ՚ինչ էլ մօտ արի, միքիչ էլ։

—Իշխանն ապրած կենայ,—ասում է Ցոլակը և առաջ գնում.—քեզ համար մի փոքր ընծայ եմ բերել. խնդրում եմ չարհամարհես և քիչը շատ համարես։

Ասում է և անմիջապէս մեղրով ամանը վրայ բերում ու՝ տրաք... ծեփում—խփում ուղիղ փնթփնթան-ապօր քիթումռուքին։

Արջն իսկոյն տեղից վեր է ցատկում և զայրացած փնթփնթում։

«Հը՛ը՛-մը՛, հը՛ը՛մ, հը՛մ-հը՛մ, մը՛-ը՛մ... հը՛ը՛...»։ Այսինքն-թէ՝

Երբէք դեռ ոչ մի մարդ չէր համարձակուած այսպէս բան անել, և յանկարծ դու՝ նապաստակ հեծած մանչուկ, գաս և՝ ոչ դէս, ոչ դէն, առանց այլևայլութեան այսպէս յանդուգն, այսպէս կոպտակահար վարուես ինձ հետ։

Եւ բարկութիւնից կրակ կտրած արջը



Փնթփնթան-ապէրը։

ականջները ծալում-կպցնում է քներակներին, դունչը ցցում վեր ու մի այնպիսի զուռոց բարձրացնում, որ մեր խեղճ Խլըշիկի թուքը ցամաքում, լեզուն փորն է ընկնում,

ահից լեղին պատառվում։ Նա մոռանում է ամեն բան՝ և՛ աղուէսի կոնձկոնձալը, և՛ գայլի սոսկալի ոռնալը։

«Առաջ ո՞րի քիլը քամուն տամ—մեծ պատառն ականջը թողնեմ,—մտածում է ինքնիրան արջը.—հը՞, առաջ ո՞րին բրդը-դրի տամ—պատառ-պատառ անեմ։ Նապաստակը լաւն է, մանչուկը աւելի ևս, բայց դրանց երկուսից էլ լաւը և պատուականը այս մեղրն է»։

Այդպէս ինքնիրան մտմտալով, մօտենում է մեղրին, հոտոտում և ապա մրմթ-մրմթում.

«Հը՛մ, հը՛մ-ը՛մ»։ Այսինքն-թէ՝

Անհալ մեղրն է, շատ լաւն է։

Յետոյ սկսում է լիզել, և լիզելով-լիզելով՝ դունչն այնքան է առաջ տանում, որ գլուխն ամբողջովին մտնում է ամանի մէջ։

—Հրէ՛տ, է՛,—ուրախացած բացականչում է Ցոլակը.—իմ ուզածն էլ հէնց այդ է. հիմա դու այլևս չես կարող ազատուել մեր ձեռքից։ Դէ՛, մէկ լա՛ւ մտիկ տուր, Խըլը՛չիկ։

Ասում է Ցոլակն ու հոնի դազանակը ձեռքն առնում, չոքում արջի-ջանին ու

մին-երկու, տասներկու՝ տուր թէ կըտաս, վեր հատում՝ էէ՛... Թիկունքին, էէ՛... կարկաժին, էէ՛... քներակին, դնչին, կոկոզին, հաստ վզին, փորի տակին և էլի նորից կարկաժին ու կարկաժին։

Պաա՛յ, ձեզ մատաղ. փնթփնթան-ապէրը մի այնպիսի զոռոց է բարձրացնում որ անտառ, ձոր ու սար զըյմբ-զըյմբում ու դրըմբ-դրըմբում են։ Նա գլուխը մին բարձրացնում, դէսուդէն էր ընկնում, մին ցածացնում, ուժգին թափահարում, ապա նորից բարձրացնում, կրկին ցած բերում, էլի թափահարում, որ ամանը վայր ընկնի, գլուխն ազատուի։ Բայց ո՛չ, ամանը վայր ընկնելու միտք էլ չունէր։ Անհալ մեղր, բրդոտ գլուխ, դէ՛, ասէ՛ք, ինչ կը-լինէր, ի-հարկէ կը-կպչէր, էլ կը-պոկուէ՞ր։

«Ըուա՛հրրրը՛»,—զոռում էր արջը և ինքն-իրան մռթմռթում.

«Հը՛ընքը՛-հը՛մքը՛, հըմբ՛-մբ՛, մբ՛, հը՛մ-հըմբ՛-հը՛մ...»։ Այսինքն-թէ՝

Ինչ վատ բան է բկլիկ—շատակեր լինելը, մի բան ուտելու համար հոգի տալը... Հարամ լինէր այսպէս մեղրը, որ ինձ այս կրակի մէջը չգցէր... Այս անիծած ամանը աչ-

քերս փակել է, իսկ ես ոչինչ չեմ տեսնում. հապա եթէ դրանք դանակ են սրում որ փորս կոխեն, կամ հրացան լցնում՝ որ ինձ գնդակահար անեն—սպանեն, յետոյ... Ո՛չ, այսպէս մնալ՝ ու դատարկ գոռգոռալով բան չի դառնալ. էլի լաւն այն է, քանի դեռ ողջ եմ, քանի ոտերումս ոյժ ունեմ, պուկ անեմ—փախչեմ, գլուխս ազատեմ։

Եւ փնթփնթան-ապէրը՝ կոյր ձիու նման գլուխը բարձր բռնած ու դունչը մեկնած սկսում է մի կերպ վազել հարթ տեղերից, իսկ դարիվայրերից՝ ինչպէս արջերի սովորութիւնն է, թոլ լինել—գլորուել։

Ցոլակն էլ հեծնելով իր բարեկամ Խլըշիկին՝ կրնկակոխ արջին է հետևում ու շարունակ վրայ բերում հոնի դագանակը՝ արջի հէնց ուրտեղին ասես։

—Հը՜, ծուռթաթ, ինչ ես սինգ-սինգ անում—սխտոր թակում,—ասում է Ցոլակը.—վազիր կարգին։

Հոնի դագանակի սարսափելի հարուածներից ազատուելու նպատակով արջն սկսում է վազել՝ ինչքան ոտերում ոյժ է ունենում։ Բայց որովհետև նա չէր տեսնում թէ ոտքն ուր է դնում, մէկ-էլ յանկարծ թլրփանթրի է տալիս—գլդիգլոր լինում ու թլամփ՝ ընկնում մի խոր ու մեծ փոս։

—Փնթփնթան-ապէր, հիմա որ քո թուղթը ջուրն ընկաւ—դրութիւնդ իսպառ վատացաւ, որովհետև քանի գլուխդ ամանի մէջն է, յաւիտեանս յաւիտենից դու էլ չես կարողանալու դուրս գալ այդտեղից,—ասում է Ցոլակը և յետոյ դիմում Խլըշիկին.

—Այս ամենը շատ լաւ, սիրելիս. սակայն ինչպէս անենք, որ նրա փառաւոր մորթին ձեռքներիցս չհանենք, անչափ լաւն է։ Խլըշիկ, արի կը-լինի դու...

Ցոլակը դեռ խօսքը չէր վերջացրել, որ մէկ էլ յանկարծ դաշտ, սար, ձոր ու անտառ կարծես իրար դիպան։ Այնպիսի սարսափելի զոռում-զոչիւն բարձրացաւ, որ լսողի վրայ զարդանդ էր գալիս։

Ցոլակն իսկոյն ղլխի է ընկնում—հասկանում, որ գագաններին վախացնելու համար որսորդների հանած դշդրին է այդ աղաղակները, այլև լաւ իմանալով թէ Խլըշիկի դրութիւնն ինչ կը-լինի, իսկոյն սկսում է սիրտ տալ նրան.

—Հանգիստ եղիր, սիրելիս. մի՛ վախենար, ես քեզ մենակ չեմ թողնիլ։

«Ահա՛յ... հահահահա՜... ա՛լբաո՛ւ... ա՛հահահահա... հաո՛ւ»... Նորից լսելի է լինում ղշղրի ձայները և հետն էլ սուլոց, շլուց, որոնք միացած շների հաչոցին ու որսորդական փողերի ձայնին՝ այնպիսի ժխոր—շփոթ, խառնակ ու սարսափ ազդող աղաղակներ էին վեր կացրել, որ թվում էր թէ ողջ անտառի ծառերը զօրեղ փոթորկից բռնուած՝ խլացուցիչ ճարճատումներով ճղակոտոր են լինում։

Այդպիսի ժխորից ո՛չ թէ աղուէսը, ո՛չ թէ գայլը, այլ նոյնիսկ անտառի իշխան փնթփնթան-ապէրն էլ կարող էր սոսկալ ու սարսափել. դէ՛, դո՛ւք ասացէք, թէ ի՞նչ կը-լինէր մեր բարեկամ Խլբշիկի դրութիւնը։

«Ա՛խ,—ասում էր խեղճը ինքնիրան—չլինի՞ թէ աշխարհիս վերջն է արդէն»,—ապա մօտենում է Ցոլակին և աղաչական ձայնով խնդրում.

—Հէնց քո արևն ապրի, հէնց քո մայրը կանանչ-կարմիրդ կապի, հէնց մուրազիդ հասնես, ինձ թող որ գնամ։ Որովհետև այդ ղշղրի ձայները նշան է թէ որս են խռիկ տալիս, ուրեմն մահն ինձ է մօտենում և ո՛ւր որ է, շուտով կը-հասնի...։ Թող գնամ, աղաչում եմ։

—Ի՞նչ յիմարն ես. հօ չե՞ս գժուել։ Ի՞նչպէս կարող եմ քեզ թողնել. չէ՞-որ դու ուղղակի շների ռեխը կ'ընկնես կամ որսորդները զնդակահար կ'անեն քեզ։

—Ա՛խ, Ա՛ստուած, այս ի՞նչ կրակ ու պատուհաս էր որ վրայ հասաւ... Վայ՛ յ, նանի-ջա՛ն, ի՞նչ պէտք է անե՞մ,—ասում է խեղճ Խլբշիկն ու զնգբրզնգբը դողացնում։

—Ասում եմ որ քեզ մենակ չեմ թողնիլ, մի՛ վախենար։ Բայց որպէսզի բոլորովին ազատ լինես վտանգից, ա՛րի հետս գը-նանք նրանց մօտ։

—Նրանց մո՞տ,—սոսկումով բացականչեց Խլբշիկը։

—Այո՛, ուղիղ նրանց մօտ,—շներով շրջապատուած որսորդների մօտ։ Ա՛րի գնանք։

—Ո՛չ, ո՛չ, աղաչում եմ. չէ՞-որ նրանք ինձ բզիկ-բզիկ կ'անեն—մեծ պատառս ականջս կը-թողնեն։ Հօ տեսնում ես...

—Էհ՛հ, երկար խօսել հարկաւոր չէ,—նրա խօսքը կտրում է Ցոլակը և վրայ ընկնում-բռնում լոշտակ-լոշտակ ականջներիցը և հետը քաշ տալիս-տանում դէպի որսորդները։

—Տղերք-ջա՛ն, մէկ այն կողմը մտիկ

տուէք, տեսէք՝ այն ինչ է,—զարմացած ձայն է տալիս որսորդներից մինը, երբ տեսնում է մեր բարեկամներին։

—Աղա՛, մի պստիկ տղայ է, որ նապաստակ է բերում քաշ տալով։

Ցոլակը երբ մօտենում է որսորդներին, քաղաքավարութեամբ բարևում է.

—Բարի աչողում ձեզ։

—Ա՛յ, բարին սիրուն արևիդ, մատաղ քեզ,—Ցոլակի բարևն առնում են որսորդները։

—Ի՞նքդ ես բռնել այդ նապաստակը,—հարցնում է մի ծերունի որսորդ։

—Ո՛չ, պա՛պի, ես չեմ բռնել, այլ ինքն իր ազատ կամքովն է ինձ մօտ եկել. սա իմ լաւ բարեկամն է, խնդրում եմ չթողնէք, որ շները վնաս տան։

Խլրշիկը շատ զոհ է մնում իր բարեկամից, որ այդպէս պաշտպան դուրս եկաւ իրան. և նա մի-երկու անգամ աչքերը ճպճըպացնելով կնդով է անում, որպէս նշան իր անչափ զոհունակութեան։

—Ուսինդ ինչ է, մէկ տեսնեմ...։ Վա՛հ, վա՛հ, ինչ հիանալի մորթի է։ Այս ո՞ր տեղից ես գտել։

—Չեմ գտել, այլ ես ու իմ բարեկամ Խլրշիկը բռնեցինք, սպանեցինք ու մաշկեցինք։

Խլրշիկի ուրախութեանը չափ չկար. նա մտքումն օրհնեց Ցոլակին և շատ գոհ եղաւ որ իր բարեկամը անպիտան մեծամիտներից չէ, որոնք ամեն բան իրանց են վերագրում և զզուելի կերպով պարծենում՝ թէ իրանց կիսատ-պռատ արածով և թէ՝ որ աւելի վատն է, ուրիշների սեպհական աշխատանքով։

—Մի՞թէ ուղիղ ես ասում։ Դուք ինչպէս կարող էիք աղուէսին սպանել. շատ զարմանալի է,—կասկած է յայտնում ծերունի որսորդը։

—Զարմանալու ինչ կայ, պա՛պի. բացի աղուէսից մի գայլ էլ ենք սպանել։

—Չէ՛, չէ՛. մի... պոզեր էք արել։ Ինչե՞ր ես ասում, սիրելիս։

—Հաւատացնում եմ ձեզ, որ ուղիղն եմ ասում։ Եթէ կամենաք, գնանք ցոյց տամ։

—Զա՛տ բարի, գնա՛նք,—ասում է որսորդների գլխաւորը։

Ցոլակն ու Խլրշիկը առաջ են ընկնում, իսկ որսորդները հետևում են նրանց։ Երբ տեղ են հասնում և սատկած գայլի մօտ

կանգ առնում, որսորդները զարմացած՝ մին ահագին գայլին են մտիկ տալիս, մին Ցոլակին ու Նապատակին։ Նրանք չէին հաւատում իրանց տեսածին։

Գլխաւորի հրամանով գայլին մաշկում են և կոկորդից կեռը հանում-տալիս ցոլակին։

—Սակայն մենակ խօմ այս չէ,—ասում է Ցոլակը.—մենք երկսով մի փնթփնթանապէր էլ ենք բանտարկել փոսի մէջ։

—Ի՞նչ։

—Ասում եմ մի արջ էլ փոսի մէջ ենք գցել։

—Ի՞նչպէս թէ արջ։

—Ա՛րջ, էլի՜, արջն ի՞նչպէս կը-լինի։

—Ինչե՞ր ես դուրս տալիս։ Չլինի՞ թէ սուտ ես ասում. ուզում ես մեզ խաբել,—նկատում է որսորդներից մէկը։

—Պա՛ռոն, խնդրեմ ինձ չվիրաւորէք։

—Ես քեզ չվիրաւորեցի, սիրելիս։

—Էլ վիրաւորելն ի՞նչպէս կը-լինի, քանի-որ ինձ անպատիւ խօսքեր էք ասում. դուք ինձ ստախօս ու խաբերայ էք համարում, մինչդեռ ես իմ օրումը ո՛չ սուտ եմ խօսել և ո՛չ էլ խաբել. որովհետև գիտեմ

որ անաղնիւ ու անպիտան մարդիկն են սուտ խօսում և միշտ խաբում։ Դուք գայլի համար էլ ինձ չհաւատացիք, կասկածեցիք ասածիս վրայ. բայց որովհետև այն-ժամանակ դուք ինձ ամենևին չէիք ճանաչում, այդ պատճառով չվիրաւորուեցի ձեր կասկածից, այլ ստիպուած երդումն կերայ։ Իսկ հիմա որ քիչ թէ շատ ինձ ճանաչելով հանդերձ՝ էլի կասկածում էք և դեռ անպատիւ խօսքերով էլ վիրաւորում, հիմա այլևս չեմ երդուիլ։ Իմ ողորմածիկ պապս ինձ խորհուրդ է տուել, որ ամեն մի չնչին ու աննշան բանի համար երդումն չուտեմ, որովհետև այդ շատ վատ սովորութիւն է։ Ազնիւ մարդու այո՛-ն՝ այո՛ պէտք է լինի, ո՛չ-ը՝ ո՛չ։ Հիմա էլի եմ ասում. մենք, այսինքն ես ու Խլըշիկ բարեկամս մի արջ ենք բանտարկել մի մեծ փոսի մէջ, եթէ կամենաք, գնա՛նք, ցոյց տամ։

—Մեր միտքը քեզ վիրաւորելը չէր, մա՛տաղդ եմ,—ասում է որսորդների գլխաւորը, հիացած Ցոլակի ասածներից.—բայց եթէ մեր ասածները աղնիւ սրտիդ դիպան, իմ և ընկերներիս կողմից յատուկ ներողութիւն եմ խնդրում։ Դու մի արմանք-զար-

մանք տղայ ես, չնայելով որ այդպէս փոքր ես։ Արածներդ քաջ տղամարդու գործեր են, իսկ ասածներդ ճշմարիտ իմաստունի խօսքեր և տպելու արժանի։ Զօրանաս, մնատաղ. օրհնեալ քո ծնունդը։ Երանի՜-թէ մեր բոլոր մեծ ու փոքրը քեզ նման քաջ ու անվախ, քեզ նման ազնիւ ու ճշմարտախօս լինէին, այն-ժամանակ մեր սիրելի Հայ ազգը երջանիկ և երանի տալու կը-լինէր։ Դէ՛, առաջ անցիր բաբեկամիդ հետ, ի՛մ քաջ, իսկ մենք ձեզ կը-հետևենք։

Ամենքը միասին շարժուեցին ու գնացին։ Բաւական գնալուց յետոյ հասան այն փոսին, որի մէջ էր ընկած արջը։

Որսորդները անչափ զարմանքից մնացին բերանաբաց, միքանի րոպէ անշարժ կանգնած։

Փնթփնթան-ապէրը ձայն-ձիւն առած լինելով, դադարում է չարչարուելուց և կցում իր սարսափելի, Խլբշիկի ջանը դող գցող գոռոցը.

«Ըուահրբբ՝ ճուռ»։

Որից դաշտ, սար, ձոր ու անտառ զլմբզլմբում էր ու զրմբզրբմբում։

—Տղերք-ջան,—գիմում է ծերունի որսորդը աւելի երիտասարդներին.—արջն այդ դրութեան մէջ ոչ-ոքի այլևս չի կարող վնասել. գնդակահար անելով՝ մորթին կը-փչացնենք, ափսոս է։ Ուրեմն թող ձեզանից մէկը ներքև իջնի և նիզակը խրի կռնատակը։

Երիտասարդներից մինը, Օհան անունով, իսկոյն չուխի փէշերը քլաւանդ է անում—հաւաքում-խրում գօտիկը, որ իջնելիս չխանգարեն, և նիզակը ձեռքն առնելով իջնում է փոսը։

Մեր Խլբշիկը զարմանքից ու սարսափից տեսածին չէր հաւատում և մտքումն ասում էր.

«Խե՜ղճ մարդ, երևի խելագար է որ արածը չի հասկանում. ինքն իր ոտով է գնում որ մահի բերանն ընկնի»։

Օհանը հէնց-որ վայր է թռչում փոսի մէջ, արջը՝ թէ՝ այդ թրըմփոցի ձայնից և թէ մարդահոտ առնելով իսկոյն ծառս է լինում—ետի ոտերի վրայ կանգնում ու այդպէս սկսում գնալ դէպի այն կողմը, որտեղից ձայն էր առել։ Օհանի ուզածն էլ հէնց այդ էր. նա ձեռքի նիզակը բարձրացնում է և այնպէս թափով—ուժգնութեամբ շամփրում—խրում արջի կռնատակը, որ այդ մի

հարուածը բաւական է լինում ահագին գազանին գլորելու։

— Ա՛պրես, կեցցես, կուռդ դալար, Օ՛հան, —ձայն են տալիս ընկերները վերևից։

Ապա թոկ կապելով՝ արջին փոսից դուրս են քաշում։ Երբ մաշկում-պրծնում են, գլխաւորը դիմում է Յոլակին.

—Ճիշտն ասած՝ այս ահագին արջը իսկապէս քո սպանածն է և հէնց քեզպէսի համար են ասել՝ «թէև ինքը չկար թիզուկէս, արարմունքն էր գազուկէս»։ Այո՛, պստիկ ես, մատաղ, բայց ճշտիկ ես։ Դէ՛, հիմա ասա՛, տեսնենք, իմ քաջ. արջի մորթու համար որքան պէտք է վճարենք քեզ։

—Կը-ներէք, այլև աղուէսի ու գայլի մորթու համար։

—Ճա՛տ լաւ. սակայն ո՞ւմ պէտք է վճարենք. քո՞ զ թէ քո բարեկամ Խլըշիկին։ Զէ՞-որ նա է քեզ ման ածել։

—Նա՛ է ինձ ման ածել թէ-ոչ, այդ իմ գիտենալիքն է. դուք վճարեցէք ինձ, իսկ յետոյ ես գիտեմ իմ բարեկամը։

—Ո՞ւրքան տանք. յիսուն կոպէկ բաւակա՞ն է։

—Ի՜նչ... Ե՛ւ երեսայ էք խաբո՞ւմ։ Յիսուն

կոպէկ հէնց մենակ աղուէսի պոչն արժի, հապա երեք մորթին. դրանք բա՞ն չեն։ Ո՛վ գիտէ թէ դուք այսպէս մորթիք իսկի չէք էլ տեսել ձեր օրումը։

—Ո՞վ չի տեսել, ա՛դա,—նկատում է նրանցից մէկը.—բա էլ ինչի՞ որսորդներ ենք։

—Դէ՛, եթէ տեսել էք, ուրեմն պէտք է որ գներն էլ իմանաք. էլ ի՞նչ էք անպիտան վաճառականների նման սակարկութիւն անում, իզուր տեղը ժամանակ կորցնում։ Զէ՞-որ ժամանակը ոսկի է, որ չի կարելի անխնայ բանացնել։

Որսորդները թէ ամաչեցին Յոլակի արդարացի յանդիմանութիւնից, թէ մնացին հիացած ու զարմացած նրա խելօք-խելօք խօսքերի վրայ. ուստի այլևս առանց խօսելու՝ երկու ռուբլի եօթանասունուհինգ կոպէկ տուին։

Յոլակը ուշադրութեամբ համրելուց յետոյ, ասում է.

—Թէև շատ աւելի արժեն, բայց որովհետև ձեզ ամեն մէկիդ ևս մի-մի բան պէտք է հասնի, ուստի բաւականանում եմ այսքանով։

Իսկ այդ միջոցին միւսներն սկսել էին նապաստակի հետ խաղալ. որը նրա կուտ-

ռուզ պոշիցն էր բռնում-ձգում, ուրը ականջիցը քաշում, ուրը բեղիցը ձիգ տալիս, ուրը դրդում, ուրը կմշտում, ուրն էլ հրում ու հրմշտում... էլ չմտածելով որ կատուի խաղը մկանը մահ է։

«Եարաբ այս թոկից փախածները, այս անգութ մարդիկ ինչ են ուզում ինձանից։ Ես խօմ սրանց վնաս չեմ տուել, էլ ինչու են ինձ այսպէս չարչարում, անդանակ մորթում», ասում է ինքնիրան Խլրշիկը և անհագստութեամբ մէկ խլրշկոտում, մէկ անթարթ աչքերով Ցոլակին նայում։ Նա կարծես ասելիս լինէր.

«Սիրելի բարեկամ, արդեօք ես ողջ-ողջ պէտք է ազատու�սրանց ձեռքից»։

Ցոլակը հասկանալով իր խեղճ բարեկամի միտքը, իսկոյն ասում է.

—Ժամանակ է, սիրելի Խլրշիկ, գնանք։ Մնանք բարով, պարոններ։

—Գնա՛ք բարով, քաջեր,—պատասխանում են որսորդները միաբերան։

Ցոլակը հեծնում է նապաստակին ու հայդէ՝ քշում ուղիղ դէպի գիւղ։

Երբ հասնում են գիւղի մօտ, Ցոլակն իջնում է և ասում.

—Հիմա մեր էլ բաժանուելու ժամանակն է, սիրելիս, մենք էլ մնաս-բարով ասենք իրար։

—Ձշմարիտ-որ շատ լաւ կը-լինի,—իսկոյն համաձայնում է Խլրշիկը։

—Բայց հօ սովորի՞ցիր քաջ լինել։

—Էլ ի՞նչ հարկ կայ հարցնելու, քանի-որ ինքդ ինձանից աւելի լաւ գիտես։ Ձէ՞-որ ես անցկացրի քեզ գիւղամիջով շների առաջից, ես տարայ քեզ խնամի աղուէսի, վայրի-ծաղկակոխու և փնթփնթան-ապօր մօտ։ Դէ՛, ինքդ ասա՝ եթէ քաջ չլինէի, կարո՞ղ էի այդ բաներն անել։

—Ի-հարկէ, ի-հարկէ։ Ուրեմն այժմ դու ոչնչից— ոչ-ոքից և ոչ մի բանից չես վախենում, այնպէս չէ՞։

—Հարկաւ որ այդպէս է,—պատասխանում է Խլրշիկն ինքնաբաւական կերպով.—կ'ուզե՞ս փորձի՛ր. առաջուայ նման ծա՛փ տուր։

—Շատ լաւ,—ասում է Ցոլակը, բայց դիտմամբ մի բոպէ մնում լուռ և անշարժ կանգնում։ Յետոյ յանկարծ որ ծա՛փ չի տալի՞ս... պա՛յ, պա՛յ, պա՛յ պայ, պա՛յ... Խլրշիկը կանգնած տեղից այնպէս է վեր թռչում, որ տասը սաժէն հեռու է ընկնում. բայց յետոյ

հասկանալով իր սխալը, յետ է գալիս Ցոլակի մօտ, որ նա փորձը նորից կրկնի։

Սակայն Խլըշիկը դեռ չէր պատրաստուել այդ բանին, երբ Ցոլակը անսպասելի կերպով երկու անգամ վրայ ու վրայ նորից է ծափ տալիս...։ ՎըյՀ՞յ, նանի-ջան... վըյՀ՞յ ձեզ մատաղ... մեր խեղճ Խլըշիկը զըրկի-փրկի եկածի նման այնպէս է սասանվում ծափի կրկնակի ձայներից ու յանկարծ ծլունգ լինում, որ մի օրավար հեռու է ընկնում։ Բայց այս անգամ այլևս յետ չի գալիս Ցոլակի մօտ, այլ բացի իր չորս ոտից, չորսն էլ ուրիշ է փոխ առնում և առանց ետ նայելու հա՛յդէ՝ սրՀ՞ակ անում—փախչում-գնում։ Գնում է և ինքնիրան հետ այսպէս խօսում.

«Ո՛չ, յանկարծ ու մէկ անգամից ոչ շատ բան կարելի է չինել և ոչ շատ բան սովորել. այլ պէտք է սովորել քիչ-քիչ և համբերութեամբ...։ Այո՛ քաջութիւնն էլ մարդ պէտք է հէնց փոքրութիւնից սովորի ուրիշ լաւ-լաւ բաների հետ, որ երբ մեծանայ, իրան պէտքը գայ, իր գլուխը պահել կարողանայ...։ Է՞հ, դրանց քաջութիւնը իրանց գլխովը տուած. քիչ մնաց լեղիս պատռուէր...։ Այդ ինչ սարսափելի ձայներ էին...։ Բայց չկարծեմ թէ

դրանք ծափի ձայներ լինէին, այլ անպատճառ ուրիշ բաներ էին...։ ՎըյՀ՞յ... սիրտս ինչ է գնում ու գալիս. կարծես ուզում է տեղից դուրս թռչի...։

Ցոլակը՝ որ կողքը բռնած ծիծաղում էր, երբ տեսնում է Խլըշիկի բոլորովին գնալ-հեռանալը, ինքն էլ վերադառնում է իրանց

Տատն աղօթք է մրմնջում Ցոլակի համար։

տուն ու մորթիների համար ստացած փողը թափում տատի գոգը։

Խեղճ պառաւը հա՛մ զարմանում է, հա՛մ

վախենում. նա սկսում է մին փողին մտիկ տալ, մին Ցոլակին նայել։

Ցոլակը խելօք տղայ էր. նա Իսկոյն հասկանում է իր սիրելի տատի միտքը, ուստի մի-առ-մի պատմում է նրան ամեն բան։ Ահա միայն այդ ժամանակ տատը հանգիստ շունչ է քաշում և Իսկոյն վրայ ընկնում-գրկում իր քաջ ու խելօք թոռին և համբոյրներով ծածկում նրա երեսը։ Ապա հայր Աբրահամի օրհնանք է թափում վրէն ու մտքի մէջ աղօթք մրմնջում առ Աստուած, որ իր սիրելի թոռնիկը միշտ այդպէս քաջ ու խելօք մնայ, ուսման մէջ էլ քաջ ու աշխատասէր լինի, որպէսզի երբ հասակն առնի—մեծանայ, մեր սիրելի ազգի համար օգտակար անդամ դառնայ։

Տատի աղօթքն անկեղծ էր, Աստուած կը-լսէր։

Հ. Ս. Խ. Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С. С. Р. А. Публичная Библиотека
7/XI—1922
имени А. Мясницяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ТИФЛИССКАГО СОБРАНІЯ БИБЛИОТЕКА

Երես	6	վեր.	4-րդ	տողի	էջին	էջը	պէտք է լինի	էջին	էջ
«	31	«	«	«	Հակացա՛ր	«	«	Հասկացա՛ր	
«	38	ներք.	11	«	Ասծունն է	«	«	Ասծունն է	
«	41	«	6 և 7	«	կա-տարներ	«	«	կա-տակներ	

8/VI-27 | 23 էջը մաքրվ.
5-7 էջերի տողերի
և էջերի ծայրերի

ՀՀ Ազգային գրադարան
NL0390644

891.718